

344

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ

(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Պ Ե Տ Հ Բ Ա Տ

8

2-30

2 NOV 2009

13 MAY 2005

8
4-30

Ար

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ
(ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Կազմեց
Ս. ՀԱՅՐՅԱՆ

Նկարները
Բ. ՄԵՍՐՈՒՅԱՆԻ

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ

1936

10.05.2013

344



2379

38

Ф. У. Ф. У. Ф. Ф.

Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱՆԴԻ ԾԱՌԱՆ

Մի ժլատ տերտեր —
Հարուստ, տնատեր —
Վաղ գնաց շուկա,
Վոր գործը հոգա,
Հետ դառնա տուն գա:
Ետ տեր ժլատին
Պատահեց Բալդին,
Ասավ, «որհնիր, տեր,
Ի՞նչ կուզես, տերտեր»:
— Կուզեմ մի ծառա՝
Շատ բան իմանա,
Ապրի չոր հացով,
Լինի խոհարար,
Զիապահ, գուրգար,
Շատ եժան վարձով:
— «Ա՛ տեր, ինձ վարձիր»
Կուզես քար բարձիր.
Մի կլոր տարի
Ինձ տանդ պահի.
Թե ուտիս, թե պաս,
Տուր ինձ լոկ սպաս.
Ու տարվա վերջին

Բո տանը միջին
Թող միջամատով
Յերեք հատ կըտտոց
Տամ քո ճակատով,
Ահա իմ վարձը—
Վերջացավ հարցը»:
Տերտերը խորհեց,
Ճակատը քորեց.
Կըտտոցները իրա մեջ
Բան չհաշվեց, ասավ հեշ,
Կըտտոց ել կա, կըտտոց ել
Յեվ մոռացվեն գուցե ել:
Համաձայնեց պայմանին
Յեվ տուն բերեց ծառային:

Ինչպես ցույց տվավ փորձը,
Բալդին գիտեր իր գործը.
Արի լեր մարդը,
Վարում եր արտը,
Պահում եր նա ձին,
Հասնում եր հնձին,
Նա քիչ եր քնում,
Շուտ եր վեր կենում,
Շուկա լեր գնում,
Տան պաշար առնում,
Տանը շուր կրում,
Ոջախը վառում,
Վրան ձու խաշում,
Խաշում ու կպճում,
Յերբեք չեր վիճում:
Հիացել եր իրիցկինը.
Վրան ցավում եր աղջիկը.

«Հայրիկ» կանչում տան փոքրիկը,
Վոր նստում եր Բալդու գիրկը:
Տերտերը միայն
Չեր սիրում նրան.
Յերբ հիշում եր Բալդու մատը,
Ճըքճըքում եր ծեր ճակատը:

Տարին անցնում ե որեոր,
Իսկ տերտերը, մտամոլոր,
Վնչ ուտում ե, վնչ ել խմում,
Տարվա վերջին ե սպասում:
Ահա մի որ
Խեղճ ու մոլոր
Են քահանան
Իրիցկնկան
Խոստովանեց
Ամեն մի բան:
Իրիցկինը՝— «յես թույլ չեմ տա,
Ա՛ տեր, Բալդին ճակատիդ տա.
Յեկ դիր նրան այնպես գործի
Վոր նա իրա ուժը փորձի,
Են գործն անել չկարենա
Ու ամթով դատարկ գնա»:
Ուրախացավ են տերտերը.—
Իսկույն և եթ—հենց նույն որը
Ասավ. «Բալդի, սատանեքը
Դեռ չեն տվել տնորհները,
Գնա— ուղիք ապառիկս,
Յերեք տարեն առնելիքս»:
Բալդին մի հեզ
Ծառայի պես
Կեսը կամա,
Կեսն աղամա,

Յելավ գնաց ծովի քովը
Թոկն վոլորեց, կախեց ծովը.
Խիստ փոթորիկ ծովում հանեց,
Ափն ափին տվեց խառնեց.
Մի քիչ հետո հանկարծ—անձ,
Ծովից յելավ մի սատանա,
—Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեզնից—
Թոկդ քաշիր, հանիր ծովից:
—Ձե, ձեր ծովը յես կխառնեմ
Ու բոլորիդ դուրս կհանեմ,
Ձեր վրայի ապառիկը,
Իմ տերտերի առնելիքը
Եսպես յերկար յերեք տարի
Ինչո՞ւ համար դուք չեք բերի:
—Հերիք խառնես ծովը, Բալդի,
Ձեռքիդ թոկը խնդրեմ վայր դի—
Շուտով կտանք մենք քո հարկը
Ես ա կրգա իմ թոռնիկը:
Գնաց պապը. յեկավ թոռը,
Յեկավ, տվավ գլխին գոռը.
Մլավելով ինչպես կատուն,
—Բարե քեզի,—ասավ Բալդուն—
Ես ի՞նչ կարգ ե,
Ես ի՞նչ վարք ե,
Քո ուզածը
Ես ի՞նչ հարկ ե,
Ես ի՞նչ լուր ե,
Մեզ չարերիս
Ինչ տխուր ե,
Հեչ լսած կամ գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, ինչ անենք, կուզես կտանք
Բայց մի պայման չմոռանանք—

Մինչև ժողովի պապս հարկը,
Բերի լցնի կաշե պարկը,
Արի վազենք մենք միասին
Ծովի շուրջը. ճամբի կիսին
Ով վոր հոգնի ու յես ընկնի,
Թող նա վստիու պարկը տանի:
Մի հոհուաց ետեղ Բալդին
Ծաղրի տալով չարի ճուտին.
«Դու ո՞վ ես վոր, այ անհեթեթ,
Բալդին վազի քեզպեսի հետ.
Քիչ սպասի թող լրդպորը,
Գնամ բերեմ իմ յեղբորը»:
Բալդին անտառ գնաց արագ,
Բոնեց յերկու հատ նապաստակ
Յեվ գցելով նրանց պարկը,
Դարձավ յեկավ ծովի ափը.
Հանեց մեկին պարկի միջից
Ու բռնելով շուխա ականջից,
Ասավ չարին. «Վախկոտ ճուտիկ,
Խոսքիդ տերն ես, արի մտաիկ.
Առաջ վազիր դեռ յեղբորս հետ.
Ի՞նչ ես նայում վրան խեթ-խեթ.
Դե՛ մեկ, յերկուս, յերեք՝ վազեք,
Դուք իրարի լավ կըսագեք»:
Ու վազեցին. նապաստակը
Փախավ անտառ, մտավ ծակը,
Իսկ սատանեն՝ անկած դունչը՝
Շրջան տալով ծովի շուրջը,
Քրանաթաթախ և վազեվազ,
Շունչը կարած և ճազիվհազ,
Քարին տալով իր մի վտար՝
Իրան գցեց Բալդու մտար.
Յեվ ինչ տեսավ են լրդպորը—

Բալզին շոյում ե յեղբորը.
«Ապրի, ապրի իմ մոր բալեն,
Խիստ հոգնել ե զիլ վազելեն»:
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Ասավ.— Գնամ բերեմ հարկը
Վոր լցրել ե պապս պարկը:
Գնաց թուր պատմեց պապին,
Թե հաղթվեց ծովի ափին:

Բալզին նորից
Թռկն վոլորեց,
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Չախեր յեկան
Ծովի տակից:
Մի այլ հնարք գտավ պապը
Յեվ ուղարկեց թուրին ափը.
Թուրը յեկավ, ասավ Բալզուն.
— Հերիք խառնես մեր ծովը դուն,
Ես ինչ կարգ ե,
Ես ինչ վարք ե,
Քու ուղածը
Ես ինչ հարկ ե.
Ես ինչ լուր ե,
Ինչ տխուր ե,
Իմացած կամ գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, վոր կուզես, մենք ել կրտանք,
Բայց մի պայման չըմոռանանք:
Մեզնից հեռու— գետնի վրա,
Վորտեղ կուզես, նշան արա.
Չեոքիս փայտը ո՛վ մեղանից,

Դեն շարտի են նշանից,
Թող նա տանի վոսկու պարկը—
Յերեք տարեն ժողված հարկը:
Հը՛, լուվ՛ցար,
Տես վախեցար
Թեղ ջարդի,
Վախկոտ Բալզի:—
«Հա՛, վախեցա թես ջարդի.
Հլա լեզվին ես լակոտի,
Հլա մտիկ պուճուր շանը:
Ա՛յ, Է՛ն ամպն ե իմ նշանը:
Փայտը ենտեղ յես կնետեմ.—
Ա՛յնուհետե յես ձեզ գիտեմ»...
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը
Յեվ յեղածը ծովի ափին
Նա կցկտուր պատմեց պապին:

Բալզին նորից
Թռկն վոլորեց
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Չախեր յեկան
Խոր հատակից:
Դարձյալ յեկավ են լղպորը.
— Ա՛յ անիծվի ես մեր որը,
Բալզի, ունեմ և մի նոր բան...
«Մո՛ւս, կաթնակեր, չքոտ, անբան,
Հերթն իմն ե,— ասավ Բալզին
Են աներես չարի ճուտին.
Տեսնում ես դու՛ են մատակ ձին

Արածուս ե շոկ, առանձին.
Յեթե նրան բարձրացընես,
Չնոքերովդ կես վերստ տանես,
Չեզ կբաշխեմ ետ ձեր հարկը,
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»:
Սատանեն եր ետ խոսքի հետ
Հասավ ձիուն իսկույն կեթ
Առավ նրան իր ձեռներին,
Ձուր տալով շուխտ ծնկներին.
Բայց յերկու քայլ դեռ չփոխած,
Փովեց գեռնին, սաստիկ դողաց.
«Ժուլիկ, մուլիկ չար սատանա,
Վրադ հոգոց ո՞վ կըկարդա,
Վեր կաց, վեր կաց, չարի ճուտիկ,
Աչքերդ բաց ու ձին մտիկ,
Դու չըտարար ինձ ձեռներով,
Յես կտանեմ ես վոտներով»:
Ասավ Բաղին ու ձին հեծավ,
Վոտները մեջ նրան առավ,
Մի վերստ տեղը իսկույն անցավ,
Փոշին յելավ, գուման դառավ.
Եղտեղ դարձյալ չարի ճուտը՝
Չհասկանալով Բաղու սուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը,
Իր տեսածը ծովի ափին
Նա կցկըտուր պատմեց պապին:

Բաղին նորից
Թոկն վոլորեց,
Կախեց ծովից,
Խիստ փոթորկեց

Չայներ յեկան
Խոր հատակից.
Հնարք չկար. սատանեքը
Հավաքեցին իրանց հարկը,
Շալկած բերին Բաղու մոտը,
Մեղա գալով ընկան վոտը,
— Ա. ու ուզածդ, գնան, ապին,
Միայն հանգիստ տուր մեր դասին:

Բաղին յեկավ տնքտնքալով,
Վոսկին մեջքին գնդգնդալով,
Վան իմ որին՝ տերտերն ասավ,—
Թուավ տեղից, տեղ չըգտավ,
Կնկա փեշի տակը մտավ,
Բաղին նրան փեշի տակից
Գաշեց հանեց՝ բռնած միրքից.
Ասավ. «Բերի յես քո գանձը»:
Տարվա վերջն է, տուր իմ վարձը»:
Են տեր ժլատը
Բռնեց ճակատը,
Բաղին մի հետ կըտտացրեց,
Նրան ոճորքը թոցրեց.
Մի անգամ ել կըտտացրեց,
Լեղուն բերնում լսեցրեց.
Վերջն ել վոր չկըտտացրեց,
Խեղճ տերտերին զժվացրեց.
Ժլատ ձերտուկ, ետ բեղ մի դաս,
Եժանության ել ման չգան.
Ասավ Բաղին ուրախ, ուրախ
Յելավ գնաց անվարձ, անհախ:

ՀԱՅՆՐԻՆ ՀԱՅՆՆԵ

ՇԼԵՁՎԻԳԻ ՁՈՒԼՀԱԿՆԵՐԸ

Մթին աչքերում արտասուք չկա,—
Նստած դժնադեմ գործում են նորքա.
Գերմանիա, մենք քեզ պատանք ենք գործում,
Թունոտ ու քինոտ անեծքով լեցուն,
Գործում ենք, գործում...

Անեծք ասածուն, ում սովում անճար,
Աղոթել ենք մենք անտուն ու թշվառ,
Ում գո՛ւր ենք կանչել, գո՛ւր ենք սպասել,—
Նա մեզ ծաղրել է, յերբեք չի լսել,
Գործում ենք, գործում:

Անեծք արքային ունեվորների,
Նա անգուլթ ու չար, մենք՝ ընդմիշտ գերի,—
Նա մեզնից վերջին կոպեկն է կորցում,—
Թագավորը մեր արյունն է ծծում.
Գործում ենք, գործում:

Անեծք կեղծ ու սուտ հայրենիք և քեզ,
Ամոթանքի և զարշության կրկես,
Ուր ամեն ծաղիկ վաղ է թառամում,
Ուր ծուլությունն ու վոճիրն է սնվում
Գործում ենք, գործում:

Անվերջ, անընդհատ մագոզն է ցատկում,
Գործում ենք անդուլ, անդադար, անքուն,
Գերմանիա, մենք քեզ պատանք ենք գործում,
Թունոտ ու քինոտ անեծքով լեցուն,

Գործում ենք, գործում:

25
2112



ՀԱՅ ՔԱՅԱՆԱ

Մանրավաճառի նա խանութ բացեց,
Ծախում եր կոճակ, ասեղ ու մաստակ,
Բայց առուտուրին խելքը չըպատեց,
Փակեց խանութը, չունեցավ վաստակ:

Նա շատ թափառեց, դես ու դեն ընկավ,
Վոր կյանքում իրան մի ապրուստ ճարի,
Բայց ի գո՛ւր... Վո՛չ մի բանի պետք չեկավ՝
Զուխտ եչին բաժնել չեր կարող գարի...

Վերջը ճարահատ, յերբ տեսավ վոր ել
Մարդ չի դառնալու, հույսն ել է կորել,
Հայոց «այբուբենն» նա անգիր արավ
Յե՛վ ազգի գլխին քահանա դառավ...

ԳԱՅԼ ԲԱՐԵՊԱՇՏ

Անթիվ են մեր մեջ դայլ բարեպաշտներ.
(Մեկին, մանավանդ, լավ եմ ճանաչում...)
Մութով նա պաշտում սատանի պատկեր,
Լուսով անգաղսր աստված է կանչում...

Արտասուք խրմել կամ արյուն ծրծել
Պատրաստ է նա միշտ—ամեն թըշվառից.
Բայց փորձիր մի ճանճ վոտքի տակ դըցել,
Նա անսվ, գողսվ կանցնի վերայից...

Նա ժամ կըմտնի աստծու գառան պես,
Յերեսին անվերջ, անվերջ խաչ կանի,
Բայց թե կյանքի մեջ նըրա ճանկն ընկնես,
Մըսագործի պես, կաշիդ կըհանի...

ԿԵՂԾԱՊԱՇՏԸ

Վասյուտիկներ, — Պյոտր Իվանովիչ,
Աստծուն

շատ անհանգստացնում ե.

Որվա մեջ

հազար անգամ

յերևի,

Հիշում ե

աստծու անունը:

Մյո սուտ ճգնափորը

խորամանկ բարձի տեր ե.

Սատանան

նրա գործերի մեջ

վոտքը կշարդի անգամ.

Չափից դուրս

փչելով

իր ստերը,

Խաչակնքում ե

«աստված վկա»:

Թաթում ե

կաշառքը. —

Թաթը մեջն ե յուղի.

Ինչ եղի տեղ դրած,

Չեր հարցին, թե

«այդ վորտեղից», —

Կպատասխանի

«ուղարկել ե աստված»,

Աղքատներից

իր ահանջները

փակել ե

նա.

Վորքան ել վոր աղմկածայնը

խնդրի, մղկտա,

Նրան հեռու քշելով

ճանճի նման,

Հանդիսավոր կասի.

«խոզ աստված տա»:

Չեր վրա

սաղացներով

ապրանքի անպետքը,

Կողոպտում ե տրեստը նա.

Խաչակնքում ե

վորը ե դեմքը.

Մաքուր ե աղափուռ պես.

«խաչը քեզ որինակ»:

Թալանում են,

մորթում. —

շատ բարի.

Աստծու

անունը

միտքը յեկած,

Նա

կանցնի,

ասելով ամեն շարդարարի.

«Խաղաղություն ձեզ, յեղբայրներ,

աստված ողնական»:

Գողը

գողանում ե

գողերի հետ միացած.

Նայելով

և թագնվելով մի կողմ իսկուհն,

Շշնջում ե՝

աչքերը խոնարհելով ցած.

«Աստված ե տեսնում,

վոր յես չեմ տեսնում»:

Կողոպտելով

մասսային,

Գիրանալով նա կամաց-կամաց,

Հանրագումարում ե

քաղցը բասով իր.

«Մի որ ել ապրեցի,

փառք քեզ, աստված»:

Խմելուց

տուն

վերադառնալով,—

Թընդակարմիր դեմքով

տերտերի հետ եր

խմում,—

Նա,

ծեծում ե իր

յերեխաներին բոլոր,

Վոր աստծու ահի տակ

պահի ամուր:

Կնոջ

մագերն ու մարմինը

խախտ ե դարձրել.

Յեվ հովացնելու համար

կնոջ

զայրույթը վողջ:

Բարբաջում ե քաղցրաձայն.

«ընտանեկան գործեր են»

Աստված

մեզ

դատավոր»:

Թե խաղաղություն,

թե պարզություն կա

նրա հոգում.

Գիշերվա համար

աստծուն ե

հիշում նա.

Աղոթելով

և համեստորեն ե

պառկում

Պյոտը ի վանովիչը

քրիստոնյա:

Վայելելով

զատիկ ու յուղաբլիթ,

Աստծու խոսքով

ճարպ հավաքած,

Ինչպես քրիստոսի յետևում,

ապրում են

դեռ ելի

Կեղծապաշտները

համառուսական:

Վ. ՄՍՏՅԱԿՈՎՍԿԻ

ՅԵՐԿՈՒ ԱՖԻՈՆ

Լցնում եյին

Ռուսաստանում

ցարերը

գինի ու մաղթանք,

Վոր

դասակարգի փոխարեն

լինեք

հիմարների նախիր,

Վոր

Վողողեյին պայքարը

հրդեհաշիջ խողովակներով հարբեցողության,

Վոր վողողեր պայքարը՝

կարմրազլուխ, նաև հացի ողին:

Ժողովուրդը՝ խաչակնքված,

Գոռում ե՛

շները սեղանին անկած.—

Խմիր ապա,


Լցվի ապա

Ողին աչս թող,

Բո կոկորդով:

Խմիր,

մինչև վոր



Կարակի մոտ

Պառկես՝

ձեծկոտոցից

հանգստանալու

համար

Կապուտկածներով լի

հիմար:

Սյապիսի

գինելի՛ գը

Կառուցի մեզ հետ

սոցիալիզմը:

Հարբածը

գլուխ կհանի՛

Հնգամյա

պլանից:

Նրանք արդյոք

կարգապահությամբ

իրենց

սանձեն:

Նրանք

նույնիսկ հարթ գծով

չեն կարող անցնել:

Բանվորի պատասխանն ամբողջ՝

—Վնչ:

Կառուցող դասակարգ,

կյանքի մեջ

խրիբ

Կամքդ զգաստ,

զգաստությունն աչքերիդ:

Մենք

թշվառ եյինք

և կուզ եյինք մենք.

Հեզ աղոթքներով

տաճարում

մեր մեջքը կոր:

Հոկտեմբերը

սրբեց

և ավլեց

այդ փալանն ամեն,

Յեվ ավեց մեզ

հող՝

կանաչի շրջանակով:

Չփչացնենք

հանգիստը

հարբեցողությամբ այդպես:

Վոչ թե ողե՛ կոկորդն է վար,

այլ նավակ,

ջրի վրա:

Մեզ համար

պարկերն են մաքրվում,

տես,

Յեվ դրոշների վրայից

փայլում է՝

«հանգիստ և կուլտուրա»:

Բանվոր դասակարգն իր

շարքերն է

դուրս հանել

Ստադիոններում և

ոլիմպիադներին.

Կոլեկտիվ քայլերի

հնչյունով

փոխարինենք

Ձանգերի

ապուշ հնչյուններին:

Մենք

նոր պափոսն ենք խմում

մինչ հարբելը.

Գինիով

չթուլացնենք

մեր կամքը հորդ.

Թող կորչեն

կյանքից

յերկու ափիոնները. —

Սատված

և ալկոհոլ:

Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Լինում եյին

որեր ծնունդների,

Նոր տարի,

Հանդեսների և տոների,

Ողու,

գարեջրի:

Լինում եր

թույն,

շշերով,

Տներում բանվորական.

Բաժակները

մատների մեջ շարժելով,

Հոգնում եյին հրավերքից այնքան:

Գյուղերում

հորդում ե սամագոն...

Ո՛վ

չի քաշում

այդ ողին.

Հացի

քանի վագոն

Մահցին

մարդիկ պառլի:

Իրենց

աշխատանքներից

հանդստանալով,

Վարդուելյրները ծածկելով կամացուկ,
Յմում եյին

նեպաշները բոլոր,

Շամպայնը Փշշացող:

Իրենց

կերպարանքը ցցելով,

Յեվ սկսելով

հուշերով տարվել,

Տերտերները

նստում եյին խմելու

Ամենաքաղցր պորովեյն:

Յեվ արտիստը,

և պոետը

Խմել եր,

վոր խմում եյին այդպես

Կոնյակներ.

Իսկ չլիներ յեթե, —

Խմում եյին,

ինչ վոր հանդիպեր:

Թաթը

դնելով

շշին,

Քրիստոսի փառաբանողները կոքոս,

Թունդ կերպով

փառաբանում եյին

քրիստոսին՝

Հարբած հայհոյանքներով:

Յեվ փսխելու միջև

ու լուսանքի, —

Հարբած

աշխարհն այդ ծով,

Նոր տարին

փառաբանում եր

չեռանդագին՝

Տուրուղմփոցով:

Այդ լպրծուն ուղին

Չունի

դեպի սոցիալիզմ

ընթացք.

Դեպի կոխի

կենցաղի դեմ լսեղի,

Ու ժ

կոմյերիտի ության:

Չողավելը վերցնես,

ու կենցաղի հետ այդ կեղտասն,

Ավլես

այդ տոները նաև:

Տ Ե Ր Տ Ե Ր Ը

Տերտերներին

սատիրիկներից

վորքան է

հարված հասել,

Սատիրա— գավազանը՝

գաժան.

Կոկորդիլոսյան հետքերով

չեմ գնում յես ինքս ել,

Յես տերտերներին «խղճում» եմ շատ:

Գնում է նա

և կեղտոտ բաշի մեջ

թագցնում է

Ականջը և ուսը նիհար.

Յե՛վ արդեն

ջոկավարներին

հոկաեմբերիկները հարցնում են.

«Ո՞վ է այս

ձիծաղելի պառափս ահա»:

Պրոֆեսորանում է

բուհականների բանակն արդեն.

Շահը աստծուց քիչ է.

Յե՛վ ճանճրալի յե տերտերին՝

ամեն սր առե՛լ:

Թե վորտը

Յեղիա մարգարեյից է:

Մարդիկ թռչում են

դեպի յերկինքը.

Վոչ հրեշտակ,

վոչ դևեր,

չկան.

Բայց տերտերը

դժոխքի մասին է փչում,

իսկ ինքը

Զի հավատում

այդ բանին

մաղաչափ անգամ:

Մարդիկ

հանգստի համար

ամիսներով գնում են

Դրախտային

յերկիրը Ղրիմի,

Իսկ այդտեղ,

դուրս տուր և դուրս տուր անհեթեթությունը

Ինչ վոր

յերկնային դրախտի մասին դու մի:

Յե՛վ աղոթողները

ժլատ են կոճղի պես.

Մի ամսում

չես պոկի մի յերեքանոց.

Ստիպված ես

դուրս տալու համար

խորան շտապել,

Բայց ուզում ես

վազել

կինո:

Յես

չատ եմ «խղճում» քահանաներին,
«խղճում» եմ,

և՛ զիշեր,

և ցերեկ անդադար.—

Վոչնչացող այդ սպասավորներին

Վերացված հիմնարկության:

ԳԵՄՅԱՆ ԲԵԳՆԻ

«ՀԱՐՅԱՎ ՎՈՐԴԻՆ ԱՍՏՈՈ»

Մեր տերտերը հաստափոր
Վոսկի ուներ մի սափոր:
Զարմանալու ինչ կա վոր,
Յեկամուս կար ամեն որ:

Բայց մի ձախորդ, չար տարի
Փոխվեց կարգը աշխարհի:
Մարդիկ աստված ատեցին,
Հարուստներին դատեցին:

Մեր տերտերը սուգ մտավ,
Նի հանգիստ քուն չգտավ:
Միտք եր անում ինքն իրեն.
— Ունեցածիս կտիրեն:

Նդ անհավատ շները
Կողոպտեցին տները:
Մի որ տունս կմտնեն,
Տուփով վոսկիս կգտնեն:
Քանի ուշ չե՛ ճար անենք,
Թե չե ձեռքից կհանենք:

Ու շուտ գտավ նա ճարը,
Վոսկին տարավ տաճարը,



Դրեց բեմի մեջտեղը,
Տուփին մեխեց թիթեղը
Յեզ թիթեղին գրեց գոհ.
«Աստ է մարմինն ասածո»:
Բայց խորամանկ ժամկոչը
Հասկանալով տիրոջը՝
Հանեց տուփի փողերը,
Փոխեց գրած տողերը.
«Մարմին տյառն աստ վոչ գո,
Հարյավ վորպին ասածո»:

Ա Ր Ձ Ա Կ

Շող ե: Լավում ե, թե ինչպես են թուշում ճանճերը, և յերևում ե, թե ինչպես նրանց յերամը մեղմ ալեկոծում ե ողբ: Անցորդները սեղմվում եյին պատերին՝ աշխատելով դուրս չգալ գորշ տների ստորոտում թառած ըստվերի շերտից: Մենք գտնվում ենք Սանտանդերի գավառի Կավադա գյուղի հրապարակում: Այս հրապարակը նման ե իսպանական ու նույնիսկ բասկյան շատ գյուղերի հրապարակներին: Հին ժամանակներում, յերբ ազգային տարազներ եյին հազնում, այստեղ շատ ավելի նկարչագեղ եր. հիմա ել սակայն բավականաչափ գունեղ ե այստեղ, և Իսպանիայի հրաշեկ մեծ ցամաքն իր ցայտուն գծագրություններով ու թխադեմ բնակիչներով շողշողում ե այստեղ յերբեմնի փարթամությամբ:

Բացի ճանճերի բզբոցից, քարե պատերի միջից փողոց ե հասնում մի տեսակ խուլ, համաչափ ու միորինակ աղմուկ. դա դպրոցն ե: Դպրոցը ներքուստ վոչ մի բանով չի զանազանվում յերկրագնդի բոլոր դպրոցներից: Մռայլ ու խստատեսք պատեր (դպրոցի տեսքը չի փոխվելու մինչև այն ժամանակ, ինչքան հասարակությունն ինքը դեն չի գցել իր շապիկը), սև ու փոքր սեղանների ու այգալիսի փոքր սև գլուխների շարքեր (սև շրջանակներ՝ սև քառակուսիներ զրա), իսկ մեջտեղը մի մարդ, վորն այդ միջավայրում կարծես հսկա յե—ուսուցիչը:

նրա արարքներէ ու խոսքերէ մեջ չեր կարելի գտնել այնպիսի բան, վորն իսկապես կործանարար նշանակութիւնն կարողանար ունենալ, ապա այս թշնամուն տիրելու մի այլ միջոց պետք եր վորոնել:

Չարաբաստիկ Իսպանիայում մինչև հիմա ել քահանաներն իրավունք ունեն ուզած ըրպէյին դպրոց մտնել դասավանդման հետեւելու համար:

Իմ նկարագրած որը, դասի ամենալարված ըրպէյին դասարանի դուռը բացվեց և սենյակի կիսախավարում գծագրվող լուսավոր քառակուսու մեջ յերևացին յերկուսեկուսեկ մարդիկ: Նրանք նստեցին ու սկսեցին լսել:

Յորին բնավ չչփոթվելով, շարունակեց պարապմունքը և դաս հարցրեց փոքրիկ Սուանիտոյին, վորը հուզմունքից և հավանաբար բավականին ուշադիր չլսելուց կակազեց ու թոթովեց:

— Սըդարութիւն... հավասարութիւն...

Քահանան վեր ցատկեց, առաջ յեկավ և ըրպէյապես տնկվեց յերեսայի առջև:

— Հապս, այդ ինչ ես մըթմըթում,— հարցրեց նա զայրույթով:

Այն միջոցին, յերբ հարցաքննվողը շփոթված ու բերանը բաց կանգնել եր նրա առջև, մի ուրիշ աշակերտ՝ Ռուիցը, վոր տասնչորս տարեկան եր ու դասարանի առաջին աշակերտը՝ ցանկանալով ցույց տալ, վոր ինքն ուշադրութեամբ ե լսել դասը և ըմբռնել ե՝ վեր կացավ տեղից ու հստակ ասաց:

— Պարոն քահանա, բոլոր մարդիկ հավասար են:

— Սուտ ե,— խոպոտ ձայնով գոռաց սևասքեմ մարդը՝ վազելով դեպի առաջին աշակերտը և բռունցքը ճոճելով նրա քթի առջև:— Սուտ ե: Իա հակառակ ե յեկեղեցու ուսմունքին: Տեր աստվածը յերբեկեց չի ասել, թե բոլոր

մարդիկ հավասար են, և սուրբ Պողոս առաքյալն ել աստուծո անունով քարոզում եր, թե նրանք հավասար չեն:

Նա գոռում եր. նրա քունքերի յերակներն ուռան և բերնի անկյուններում փրփրակալեց թուքը, իսկ տեղապահը բավարարվելով միայն շարժումներով, ձեռքերը պարզեց դեպի յերկինքը:

Ուսուցիչը հանդարտ ու վճռականորեն մտեցաւ նրան.

— Թ'ույլ տվեք, պարոն քահանա... — ասաց նա:

— Ի՞նչ թույլ տամ. — մոնչաց քահանան: — Թ'ույլ տամ

վոր սուտ բան քարոզեք ու ներարկեք այն այս յերեսայիններին: Պնդել, վոր բոլոր մարդիկ հավասար են, նշանակում ե հայտարարել տեր-աստուծո մերժած սուտ ուսուցում ե հայտարարել տեր-աստուծո մերժած սուտ ուսուցումը: Հասկանո՞ւմ եք: Յերեսաներ, ինձ լսեցեք, ձեր ուսուցիչը սուտ բան ե ասում ձեզ:

— Լսեցեք. — ասաց ուսուցիչը:

Նա խիստ զուճատվել եր, հայացքն առանձնապես սևեռուն եր դարձել և ձեռքերը թեթեւ դողում ելին:

Բայց քահանան ել ավելի բարձր մոնչաց.

— Դուք ստում եք: Դուք ստի դասեր եք տալիս: Դուք խայտառակում եք յեկեղեցին... Սըդարութիւն... վննց յարդարութիւն: Չուր ե քրիստոնյաներին արդարուչե, արդարութիւն: Չուր ե քրիստոնյաներին արդարութիւն սովորեցնել,— դա նրանց չի վերաբերում: Միայն թիւն սովորեցնել,— դա նրանց չի վերաբերում: Գրիստոմի արդարութիւն կա — աստուծո դատաստանը: Գրիստոնյաներին պետք ե խոսել միայն սիրո և հավատքի մասին:

Յեւ նա ատելութեան այնպիսի շեշտով ձգաց ուղիղ ուսուցչի դեմքին այս վերջին խոսքը, վոր նա պիտի կուչ յեկավ և ել ավելի զուճատվելով, հայացքը սևեռեց նրա վրա լայնացած աչքերով: Յերեսաները վեր թռան տեղերից և իրար անցան: Ուսուցիչն զգաց, վոր ամեն ինչ կործանվել ե, և թոթովեց:

— Դուք սրիկա յեք:

Դեռ այս խոսքը չեր վերջացրել, յերբ տեղապահը

հարձակվեց նրա վրա ու բռնեց նրա ձեռքերը, իսկ այդ միջոցին քահանան բարձրացրեց բռունցքը խփելու համար:

Բայց ըստ յերևույթին տեղապահն այնքան պինդ չեք բռնել ուսուցչին, վորովհետև անմիջապես մեկը մյուսի յեռևից յերկու հարված վորոտաց: Քահանան փովեց գետին ու անմիջապես անշնչացավ վորպես մի ծանր ու անշարժ զանգված, իսկ տեղապահն ընկավ ու սկսեց գալարվել:

Յե՛վ մռայլ ուսուցչին իսկույն սթափվելով խելացնորութիւն նոպայից՝ կրակեց յերրորդ անգամ ու փովեց գետին նրանց կողքին:

Այսպիսով 1926 թվականին, քաղաքակիրթ յերկրում մեռավ դպրոցի ուսուցիչը, վոր համարձակվել էր խոսել յերեխաներին արդարութեան մասին:

Մի քանի համարձակ լրագրեր տարբեր ձևով հաղորդեցին այս դեպքը, բայց զուր կլինեք մեր ջանքը, յեթե դրա մասին հաղորդագրութիւն փնտռեցինք լայն մամուլում, վորի հիմնական նպատակը, ինչպես ձեզ հայտնի յե, աչխարհում տեղի ունեցածը թազցնելն է:

ՆԱՐ-ԳՈՍ

ՍԱՔՈՒԼՆ ՈՒՒՏ ԳՆԱՑ

Գուրգար Սաքուլը կամաց բաց արեց դուռը և ներս մտավ:

Նրա կինը, Նատոն, թևերը մինչև արմունկները քըշտած՝ պղպած էր հատակի վրա և լվացք էր անում կոծկած թաքախում: Բուխարու մեջ կասկարայի վրա դրած կաթսայի տակ մի քանի բարակ փայտ էր ծխում: Հողի հասակի վրա բավական ցեխ էր գոյացել և լվացքի սապնոտ տակի վրա բավական ցեխ էր կապել: Սենյակի ողբ հագեցած ջուրը տեղ-տեղ գուբ էր կապել: Սենյակի հոտով: Թախեր խոնավութեան, սապնաջրի և ծխի գարշ հոտով: Թախտի վրա դրած որորոցի մեջ քնած էր ծծի յերեխան: Կինը նայեց մարդու հիվանդոտ, թախծալի յերեսին, և նրա սիրտը ճմլվեց: «Ելի լավ չի» — մտածեց նա և վըշտահար մնաց նայելիս մարդու յերեսին:

Սաքուլը դուռը յետ դրեց, գնաց դեպի թախտը, մութաքեն ատաղ քաշեց և պահեց:

— Մի բան գցի վրես, — ասաց նա թուլլ ձայնով և վտանները կուշ արեց:

Նատոն սապնոտ ձեռները սրբեց, վեր կացավ, բարձրացավ թախտը, ցեխոտ շուստերը թողնելով գետնին, ծալքից հանեց բավական մեծ ու հաստ մի վերմակ և ծածկեց մարդուն:

— Լավ ծածկի, ջանս սրթարթում ա, — ասաց Սաքուլը, վերմակը գլխին քաշելով:

Նատոն վերմակի ծայրերը ներս կոխեց կողքերից՝
վոր բաց տեղեր չմանա:

— Ուզում ես, մի լըհեք ել ծածկեմ, — ասաց:
— Ծածկի:

Նատոն բերեց մի ուրիշ վերմակ ել գցեց նրա վրա
և նորից կողքերը տապալպեց: Այժմ Սաքուլը վոտով-գլխով
կորած եր վերմակների տակ: Նատոն լվացքը մոռացած՝
առժամանակ նստած մնաց մարդու մոտ: Կարճ, թախծա-
լից լուսթյունից հետո վերմակների ծայրերը յետ քաշեց
մարդու յերեսից և շնչաց:

— Սաքուլ:

Սաքուլն աչքերը բաց արեց և նայեց նրան հարցա-
կան հայացքով:

— Բա չգնացիր հիվանդանոց:

— Գնացի:

— Ի՞նչ ասեցին:

— Տասը շաբաթ յեն ուզում:

— Բա ասում են՝ ով չունի, չեն ուզում:

— Ասացին պոլիցիցը յան տերտերիցը թուղթ բեր՝
վոր չունես:

— Յետո գնացիր պոլիցեն:

— Սև գրողը տեսնի պոլիցի լերեսը. նրանց «զավթ-
րի» գլուխն ո՞վ ունի:

— Դե տերտերի մոտ գնալի:

— Տերտերի հերն ել ընտեղ անիծեմ: Նոր չեք, վոր
տեսա մեյդանումը փորը ցցած: Տաս շաբաթ ինչ ա, ասում
ա, ջահել մարդ ես, մի որ վոր բանես, ասում ա, տաս
շաբաթ չե, իրեք մանեթ ել կվեկալես: Ախր, տեր հայր,
ասում եմ, ջանս չի գալիս: Լավ, լավ, ասում ա, հանաք
եմ անում. կիրակի որը ժամ արի, ասում ա, կտամ:

— Այ, նրա ջանը դուրս գա, — սրտով բացականչեց

Նատոն: — Եդ հալով մինչև կիրակի վո՞նց մուլափ տաս
Քելեխ ըլեր, ձեռաց վո՞նց վաղ կտար:

Ու լոեց դադված սրտով: Յեվ յերկար ժամանակ
անասելի վշտով նայում եր մարդու մաշված, դեղնած
դեմքին, վորի վրա հիվանդությունը մեռելային անզգայու-
թյուն եր զրոշմել: Յերեք ամբողջ տարի յե, վոր այդ ան-
հասկանալի հիվանդությունն որ որի վրա հալում, մաշում
ե Սաքուլին: Ել գեղ չմնաց, վոր փորը չածեց, ել հեքիմ
չմնաց, վորին չղիմեց: Որեր ու շաբաթներ խաչերի դռանն
անցկացրին, մատաղներ մորթեցին, կարմիր ու սպիտակ
հագցրին, բայց և այնպես վոչինչ, վոչինչ չոգնեց: Ընդհա-
կառակը՝ Սաքուլն որ որի վրա վատացավ, հիվանդությունն
ավելի խոր բնակավեց: Սկզբներում ելի քիչ ու միշ կա-
րողանում եր բանել, բայց վերջին ժամանակներն ուրա-
զը մի քանի անգամ վրա անելուց հետո շունչը կարվում
եր և սիրտն այնպես արագ բարախում, վոր կարծում եր,
թե դուրս պիտի պրծնի բերնից: Այդ յերեք տարվա ըն-
թացքում նրանք քանդվեցին, քարը քավեցին. տանն ել վու-
կեղեն ու արծաթեղեն չմնաց գրավ դրին, ժամանակին
չկարողացան թափել — կորցրին, ավելորդ բաները ծախե-
ցին — ծախծխեցին, հետո պարտքերի մեջ թաղվեցին և
այսօր, յերբ յերթեկ հիվանդների քաղաքային բուժարա-
նում կանոնավոր դեղ ու դարման անելու համար «տաս
շաբաթ» յեն ուզում, — չկա:

Նատոն մի ծանր թառանչ քաշեց:

— Սաքուլ, — շնչաց նորից:

Սաքուլն աչքերը բաց արեց:

— Սոված չես:

— Չե:

Ախր վոչ յերեկ, վոչ ետր գատ չես առել բերանդ,
մի բան ելա կեր, վոր ուժ ունենաս: Հեղնարանք մատաղ



Քն բերել, քեզ հրճար եմ պահել, վեր կաց կե: Ազին ել հրեա
փռնիցը հացերը կբերի:

—Վոր չեմ ուզում, ինչ ուտեմ:

—Հաջաթ չի, գորով կե: Թե չե, բերանդ ըտենց հուփ
տված խո շլիս հալից կընկնես: Վեր կաց:

—Յեհ,—նեղարուսթյամբ արտասանեց Սաքուլը և աչ-
քերը նորից փակեց:

Նատեն կրկին հառաչեց և կարճ ժամանակ նստած եր
լուռ ու վշտահար մտածմունքի մեջ:

—Հա, Սաքուլ ջան,—հանկարծ ասաց նա, բոտ յերե-
վույթին, մի բան հիշելով:—Առավոտն ուզում եյի պատ-
մեմ քեզ, վեր կենամ տեսնեմ գնացել ես: Գիշերս ախր
մի զարմանալի յերազ տեսա: Թթամ թե դու ըտենց
թախտի վրա պառկած ես, մեկ ել տեսնեմ մի կարմիր
ձիավոր թուրը ձեռին նի ընկավ ու վրա պրծավ քեզ: Ե՞նչ
ես պառկել, ասում ա, ընչի՞ չես գալիս: Ես սրհաթիս
թքովս կամ, ասում ա, կես կանեմ, թե չես եկել: Ու
թուրը դորդ, վոր վրա չբերեց: Հա ըտեղ յես զարթեցի:
Սիրտս ընենց լքլքոցն եր ընկել, վոր կարծում եյի դորթ
եր: Հըմի, Սաքուլ ջան, ասում եմ, ազին վոր գա, բացա-
նաղի մոտ զրկենք: Յես ինչ գիտամ, բալի ելի խաչիցն
ես ու անմեղ տեղը քեզ պաի փչացնես զեղերով:

—Տո, ելի խաչ, վրա բերեց Սաքուլը դառն հանդի-
մանուսթյամբ:

—Վուլ, ըտենց մի ասի, Սաքուլ ջան, խաչը կնեղա-
նա,—ասաց Նատեն վախեցած:—Ղորթ ա, խաչերի դուռը
չատ ենք ման եկել, համա ի՞նչ կա վոր, ես մեկն ել փոր-
ձենք: Ախր չես իմանում, ե, իմ որումս ըտենց ափաշկա-
բա տեսած չեմ. կասես ես նրմուտին ել կանգնած ա աչքիս
առաջ ձիուն նստած, թուրը հանած: Հը՞, Սաքուլ ջան,
ազին վոր գա, զրկենք:

Սաքուլն արդեն ծածկել եր աչքերը ձանձրացած:

—Եհ, արեք, ինչ ուզում եք,—ասաց նա խորին անտարբերութեամբ:

—Հա, Սաքուլ ջան, ղրկենք, ղրկենք:

Որորոցի յերեխան լաց չեղավ:

Նատոն վեր կացավ, գնաց չոքեց որորոցի մոտ, նախ սկսեց որորել, հետո վոր տեսավ ձայնը չի կտրում, ծիծր բերանը դրեց և, մի ձեռքով որորոցը գրկած, մտախոհութեան մեջ ընկավ աչքերը մի կետի հառած:

* * *

Դուռը բացվեց: Կապույտ սուգրի մեջ հացերը շալակին, անքանքալով մտավ ազին—Սաքուլի մայրը, կարճահասակ, չորացած պառավ մի կին, վշտահար, խորշումած բարի դեմքով: Յեսակեց մտավ նրա թոռը—չորս հինգ տարեկան վախ մի աղջիկ, ձեռներով յերկու հաց իրար վրա պինդ սեղմած կրծքին: Հացերից մեկը, տակինը, սահեց եր ներքև և սպառնում եր ընկնել: Նա վազելով հասավ թախտին, բարձրացավ վոտները ծայրերը վրա և հացերն անվառս դրեց թախտի ծայրին:

Ըհը, հըլա չեր պառկել,—տխուր քրթնջաց պառավը, տեսնելով վորդուն պառկած:—Սաս, վոր կարում չես, ել խի յես ծեքծեքալի դուրս գնում:

Շալակի հացը դրեց թախտի վրա և կամաց դարձավ հարսին:

—Աղջի, քնած ա:

—Գիտում չեմ, նոր զարթուն եր,—պատասխանեց Նատոն:

Պառավը մոտեցավ վորդուն և խոնարհվեց նրա վրա:

—Սաքուլ ջան:

—Հը:

—Գնած չեմ:

—Չե:

—Վոնց ես:

—Եհ, յես իմ վոնց եմ:

—Տաք-տաք հաց եմ բերել, վե կաց կե:

Ոհ, դահլա տարաք, ելի,—Չղախութեամբ արտասանեց Սաքուլը վերմակները տակից և շուռ յեկավ մյուս կողքին:

Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժամանակ խոնարհված մնաց վորդու վրա, հետո մի ծանր թառանջ քաշեց, գնաց բաց արեց կապոցը և սկսեց թեթ-թեթ հացերը փռել թախտի վրա, վոր սառչեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց տաք-տաք հացերի ախորժալի հոտը:

—Աղջի, բա հիվանդանոց չի գնացել,—կամաց հարցրեց հարսին, վոր ծիծր տալը վերջացնելով, սկսել եր որորել յերեխային:

Նատոն պատմեց, վոր հիվանդանոցում առանց չքավորութեան վկայականի չեն ընդունել ձրի: Պատմեց և այն, վոր տերտերն ասել եր թե վկայականը կիրակի որը կտա:

—Այ, տալը գնեմ նրա գլուխը,—վորովված բացականչեց բարի պառավը:—Բա նա հոգի ունի: Ես հալին վոնց մնա մինչև կիրակի, աղջի. ըսոր յերկուշաբթի ա ախր: Հը:

—Ին յես ինչ գիտամ,—տխուր ու հուսահատ պատասխանեց հարսը և որորոցը մի կողմ քաշեց, վորովհետև թախտի մի տախտակը իրստ ձեռնում եր նրա տակ:—Աղջի, արի մի որորի, և, լվացքս մնաց,—դարձավ նա աղջկան, վորը թաժա հացից մի կտոր կտրած՝ ախորժակով կծոտում եր:

Փոքրիկ աղջիկը բարձրացավ թախտը, ծալապատիկ նստեց որորոցի մոտ և մի ձեռքով սկսեց որորել յերեխային, իսկ մյուսով շարունակում եր կծոտել հացը:

Նատոն իջավ թախտից, մերկ վոտներին հագավ շուռ:

տերը, բայց լվացքին դիմելուց առաջ նստեց սկեսոր մոտ
և փափսաց նրա ահանջին.

— Ազի ջան, արի մի ձեռաց գնա բացանողի մոտ,
տենանք ինչ կասի են իմ երազի հրմա, առաջուր վոր
քեզ պատմեցի: Այ, կտեսնես, թե ս. Գևորգը չըլի են
ձիավորը:

— Դե յես ինչ գիտամ, վորդի,— վշտահար արտասա-
նեց պառավը.— Ս. Գևորգն ել են եր, վոր գնացինք, մա-
տաղն ել են եր, վոր մորթեցինք, ճար չըլավ ու,— մեռ-
նեմ նրա վոտին:

Յեվ պառավը յերկյուղածությամբ բռնված, ծանր
հառաչեց:

— Չե ազի ջան, ազի, հոգուտ մեռնեմ, վե կաց հենց հիմիս-
կեթ գնա,— աղաչեց հարսը.— Այ, մի արասի ունեմ, տամ
Նատոն դերիայի գրպանից շտապով հանեց թաշկինա-
կը, յետ արեց ծայրին կապած մի քսան կոպեկանոց և
տվեց սկեսորը: Պառավը, լուռ ու մտախոհ, դրամը կապեց
իր բռնոթոտ, դեղնած թաշկինակի մեջ, գրպանը կոխեց,
ծածկեց իր խոնացած սև շալը և դուրս գնաց:

* * *

Անցավ մոտ յերեք ժամ: Նատոն պարզաջրել եր լվաց-
քը և փոռւմ եր փողոցում կապած թոկի վրա, վոր վե-
րադարձավ սկեսուրը:

— Վեր կացավ, աղջի, հարցրեց պառավը:

— Չե. ընենց լավ քնած ա վոր,— պատասխանեց Նա-
տոն և իր կողմից հարցրեց.— ընչի եսքան ուշացար:

Պառավը վրայից վերցրեց շալը և նստեց դռան մոտ
գետնին ամրացրած նստարանի վրա:

— Ըսկի ճար ու ճամբա կար վոր.— տոսաց նա:— Ինչ-
քան մուշտարի ունի քոռացածը,— տունը դմփում եր:

— Յանի լավ իմացավ, ազի ջան,— հարցրեց հարսը:

— Ընենց մին-մին յետ ասեց, վոնց վոր մեր տանը
նստած ըլեր:

— Ի՞նչ...

— Քու աբեր:

Նատոն արագ նստեց սկեսոր կողքին:

— Ի՞նչ ասեց,— հարցրեց նա շափաղանց հետաքրքր-
ված:

— Վոր ասեմ, ասում ա, կորուստ ա— կորուստ չի.
վոր ասեմ, ասու ա, ճամբորդ ա,— ճամբորդ չի: Ես ով վոր-վոր
ա, վոչ ըրելա յա, վոչ ծեր: Ես ինչ ա, ասում ա,
առաջն ընկած, ուրագ ա, թե ինչ— չեմ գիտում, համա
ինչ արած, ասում ա, վոր խեղճը ձեռումը դվաթ չունի
վեկալի:

— Ի՞, զորթ, ազի ջան,— բացականչեց Նատոն զար-
մանքից տարված:

— Են աստոճը: Ափսուս, ասում ա, ըժում ինչ լավ
ադամորդի յա, ե: Ես յերբ ա, ասում ա, հիվանդացել, վոր
բսենց թեղ ա կարվեց: Հրես պարզ ըրեում ա, ելի, ասում
ա, ունեցած-չունեցածը դեղ ու դարմանի յա տվել, համա
զատ չի գառել: Ես սովքեր են, ասում ա, երկուսը պատիկ
են, մեկը մենձ: Ես մենձը քիթն ա, ասում ա, թե կիկիլը,
շատ ա դարդ անում: Հրես մեկն ել կա, ասում ա, պա-
ռավ ա, սա ել ա, ասում ա, շատ տարակուսած: Դե ես
ել դու յես, ելի, ասում ա, ինչ ես շատ դահլա տանում:
— Վույ զորթ, ազի ջան,— բացականչեց Նատոն, վորի
աչքերը վառվում էին ծայրահեղ զարմանքով և հիասքան-
չումով:

— Ղորթո վորն ա, աղջի: Ասում ա ելի, ընենց մին-
մին յետ ասեց, քոռացածը, վոնց վոր մեր տանը
նստած ըլի:

— Ըժում:

— Ըժում... Ես ինչ ա, ասում ա, ձիավոր ա, թե թե-
վավոր, համա հողեղեն չի: Հրես-հրես ասում ա, պունկե-
րից կրակ ա թափվում, փասես թոնիք ըլի: Դե խաչ ա,

ելի, ասում ա. յես խո իմաստուն չեմ, ասում ա, վոր
ամեն բան դրուստ իմանամ: Ո՛ւմ համբուրող ա, ասում
ա, ս. Սարգսի, թե ս. Գևորգի, ուխտ պիտի գնա: Դե ու-
ղիչ ինչ ասեմ, ասում ա, ես ա, ելի:

—Վույ մեռնեմ ս. Սարգսի ել, ս. Գևորգի ել ողոր-
մութենին, — արտասանեց Նատոն և, աչքերը յերկինք
գցած, Չերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը: — Տեսա՞ր,
Երագս դորթ դուրս եկավ: Քոռանամ յես, անցկացած
տարին դոխտուրներն յետևից ընկանք, չգնացինք Թելեթ
ու հրմի տեսնում էս ..

— Հա, ես ել ասեց, — ընդհատեց նրան պառավը, մտա-
բերելով բաց անողի պատվերը. — իրեք որ ու գիշեր,
ասում ա, պտի պառկած մնա խաչի տակը. ոճորքը յեր-
կինքը պտի ըլի, ասում ա, կոզենքը — գետինքը, չունքի,
ասում ա, հրեղեն — թևավոր ձիավորը թռչում ա յերկնքի ու
գետնքի մեջտեղը:

Նատոն նորից ու ավելի Չերմեռանդությամբ խաչա-
կնքեց յերեսը և ասաց վճռական կերպով.

— Յես ես ամում եմ յես գնում Թելեթի ս. Գևորգի
հրմար, մեռնեմ նրա սուրբ գորութենին:

Նա վեր կացավ շտապելով փռեց լվացքի վերջին կտոր-
ները և ներս գնաց սենյակը: Սկեսուրը հետևեց նրան:

Նատոն չուտտեղը թողեց ցեխոտ հատակին, բարձրա-
ցավ թախտը, պատի մեջ գտնված պահարանից հանեց յեր-
կու գեղին մեղրամոմ, գգուշորեն, վորպեսզի թախտի տախ-
տակները չձոձոտան վտաի տակ, մոտեցավ քնած ամուս-
նուն, մոմերը պտույտ տվեց նրա գլխի վերևը, հետո
նույն գգուշ քայլերով իջավ, հագավ չուտտեղը և մոմերը
տարավ դրեց բուխարու գլխին, ուր յերևում ելին ամեն
շաբաթ գիշեր վառվող մոմերի սևացած հետքերը:

* * *

Հիվանդը տնքաց և շարժվեց վերմակների տակ:

Պառավը մոտեցավ նրան:

— Սաքուլ:

— Հը:

— Չարթուն էս:

— Հա:

— Գնացի ախր բացանողի մոտ:

Սաքուլը վերմակների ծայրերը յետ քաշեց յերեսից
և հետաքրքրությամբ նայեց մոր աչքերին:

— Հա-ա՛ ի՞նչ ասեց:

Նրա կարմրատակած թաց յերեսից և տենդոտ, պլպլ-
ող աչքերից յերևում էր, վոր քնի մեջ կազուրիչ զըր-
տինք էր յեկել:

— Վույ, եղ ինչ լավ ա ըլի, Սաքուլ ջան, հրեդ քրտինք
ա եկել, — մոտ վազելով բացականչեց Նատոն ուրախա-
ցած և, իսկույն իր գլխի սպիտակ աղուխն առնելով
սրբեց ամուսնու յերեսի քրտինքը: — Բաց չըլես, Սաքուլ
ջան, բաց չըլես, — ավելացրեց նա և սկսեց տապալել վեր-
ջան, բաց չըլես, — ավելացրեց: — Ընենց լավ իմացել ա,
մակների ծայրերը նրա շուրջը: — Ընենց լավ իմացել ա,
Սաքուլ ջան, վոր արմացք: Ազի ջան, մի պատմի, է:

Պառավը ծալապատիկ նստեց վորդու մոտ և սկսեց
ավելի մանրամասնորեն պատմել բացանողի գուշակու-
թյունները:

Նատոն նստել էր մարդու վտոներն մոտ և շարունակ
նայում էր նրա գեմքին, կարծես ստուգելու համար, թե
քացանողի ճիշտ գուշակությունն արդյոք նրան ևս նույն
գարմանքն ու հիացքն է պատճառում, ինչ վոր իրեն:

Սաքուլը լսում էր լուռ և, ըստ յերևույթին, անտար-
բեր. միայն չորացած շրթունքներն էր լպստում:
Փոքրիկ աղջիկը մի վտավ որորում էր որսորոցը և

խին, մայր մտնող արևի կարմիր ճաճանչներով վողողված,
համ շարում եր պատը, համ կլկլացնում մի բայաթի շատ
ախորժալուր տենորով:

— Ուստա Սաքուլը — բացականչեց Սերգեյ Ստեփանիչը:

— Տո, եդ ի՞նչ ա հալդ. ելի հիվանդ ես:

— Հա, ադա ջան:

— Տեսչեն, բա վո՞նց չլավացար մինչև հըմի: Ըսկի
դեղ-մեղ անում ես:

— Ընչոր ունեյի, դիփ դեղի ու համի տվի ու յես
ի՞նչ գիտամ: Ես անտեր ցավը մտել ա ջանս, դուրս չի
զալիս:

— Բա ըսկի չես բանում:

— Թե վոր լավ եմ ըլում, ընչի՞ չե, մին-մին բանում
եմ, համա մին-մին բանելով ի՞նչ կըլի: Մի տուն ողու-
շաղ պահելը դժար ա, ադա:

— Այ, թե ուզում ես, բան շատ ունեմ, ըստեղ ել
ուրիշ տեղ ել, արի բանի:

— Ուզում եմ, վո՞նց չեմ ուզում, ադա. այ, սրանց
վոր տեսնում եմ (Սաքուլը ձեռքով ցույց տվավ շուրջը),
ջանս կրակ ա ընկնում, համա վոր ես անտեր ձեռներումս
հարաքաթ չկա:

— Բա ընչի՞ յես յեկել:

— Եկել եմ, վոր... կմկմաց Սաքուլն աչքերը վայր
թողնելով և չվերջացրեց:

— Վոր ելի փող ուզես, չե:

— Հա, ադա ջան, — արտասանեց Սաքուլը խեղճ-խեղճ
նայելով նրան:

— Բա են առաջվա տասը մանեթը:

— Դե են առաջվա տասը մանեթն ել... դե, ի հարկե, —
նորից կմկմաց Սաքուլը և ավելացրեց — թե վոր...

— Ի՞նչ թե վոր:

— Թե վոր... յես ի՞նչ գիտամ, զրավ կուզես...

— Ի՞նչ զրավ:

Դե գիտես ելի, ադա ջան, մի տուն ունեմ...

— Տեսն ել ասում ա: — Սերգեյ Ստեփանիչն անկեղծ
զվարճությամբ ծիծաղեց, կայտառ պատանու պես վեր
թռավ տեղից և ձեռքով թափ տվավ քամակը: — Տո, տանդ
վոր մի քացի տամ, շուռ կգա: Բան ունես, բան սոսա:

Դե, ի՞նչ ասեմ, ադա, եդ ա, ինչոր ունեմ: Ուզում
ես՝ առ, չես ուզում՝ ասա գնա Գուռն ընկի: Ուրիշ ճաղ
չունեմ, ադա:

Սերգեյ Ստեփանիչը նորից ծածաղեց:

— Վսյ, խեղճ իմ Սաքուլ, ինչ լավ մարդ ես, — ասաց
բարեսրտությամբ խփելով նրա ուսին: — Դու ինձ ես ասա,
ելի ի՞նչքան ես ուզում:

— Ելի վոր մի քսան մանեթ տաս, ադա...

— Քսան մանեթ: Տո, քսան մանեթն ի՞նչ ա. քսան մա-
նեթին մեկ փչեցի — հանգավ, — շարունակեց ծիծաղելով
Սերգեյ Ստեփանիչը:

— Դե, հլա քսան մանեթ ել հերիք ա, ադա, — նրա
խոսքերից սրտապնդված ասաց Սաքուլը, — ու թե վոր վեր-
ջը...

Սերգեյ Ստեփանիչը հտնկարծ լուրջ դեմք ընդունե ց
— Ե, եդ չըլավ, եդ չըլավ, ուստա Սաքուլ, — շտապեց
ընդհատել նրան: — Քսան մանեթն ել վոր տալիս եմ, Սա-
քուլ ջան, հոգուս խաթեր եմ տալիս, չունքի լավ մարդ
ես, լավ ուստա յես, ինձ հըմար շատ ես բանել, համ ել
խմող չես:

— Աստված քեզ լերկար կյանք տա, ադա ջան: Յես
ել քու հացը շատ եմ կերել, շնորհակալ եմ. դե ի՞նչ ասեմ,
ադա ջան, թե վոր լավացա, չմեռա. են յես գիտամ ելի:

— Դե, հըմի մի քիչ սպասի, հրես շաքաչ կանեն, կգը-
նանք ինձ մոտ մի վեքսիլ կգրենք յառսուն մանեթի, — են
առաջվա տասը մանեթն ել հետն եմ ասում, — ու վերջը,
յերբ վոր կլավանաս, կամ փողը կտաս, կամ փողի տեղ
յերբ վոր կլավանաս,

Վրանես: Հը, լավ չեմ ասում, — հարցրեց Սերգեյ Ստեփանիչը, տեսնելով, վոր Սաքուլը, վեքսիլի անունը լսելով, մի քիչ մտատանջության մեջ ընկավ:

— Դե վոնցոր ուզում ես, աղա ջան. — ասաց Սաքուլն ականջի յետևը քորելով:

— Չե, դո՛ւ վոնց ես ուզում: Վեքսիլ նրա համար եմ ասում, վոր տան գրավը դալմադալ բան ա — ել նատարի-ուս, ել կուպչի, ել պոչլինի, — որեք կքաշի, համ ել անմեղ տեղը ծախսեր կգնաս:

— Լավ, թող վեքսիլ ըլի, համաձայնեց Սաքուլը:

* * *

Հետևյալ որն ևեթ Նատոն մի քանի արշին սզխտակ միտկալ գնեց, շապիկ կարեց և հագցրեց Սաքուլին արխալուզի վրոյից, իսկ մի քանի որից հետո «թելեժկեն» բարձած, իրենք ել յերեխաներով վրնն նստած՝ առավոտյան վաղ բռնեցին Թելեթի ճանապարհը: «Թելեժկի» յետևը վոտներեց պինդ կապապած՝ պառկած եր մատաղացու վոչխարը և գլուխը դրած «թելեժկի» ճոճոացող տախտակներին՝ իր վոչխարամիտ հոյացքով նայում եր յետեվից յերկար ու մեկ ձգվող արեակեղ փոշոտ խճուղուն:

Յերկար, քարքարոտ ճանապարհը, «թելեժկի» տատանումը, տոթ յեղանակը բոլորովին ուժասպառ արին Սաքուլին, այսպես վոր յերբ ճաշի դեմ Թելեթ հասան, մոր և կնոջ ոգնությամբ հագիվ կարողացավ իջնել «թելեժկից» և վոտները քաշ տալով, գնաց նստեց հսկայական ընկուղինու տակ, յերկայն նստարանի ծայրին:

Նույն ընկուղինու ընդարձակ հովանու տակ քառակուսի տախտակամածի վրա հավաքված եյին զուգված-զարգարված մի խումբ տիկիներ, որիորդներ և դպրոցական տղաներ ու աղջիկներ՝ թիֆլիսեցի հարուստ բազազների, բախկալների ու գինեվաճառների ընտանիքներից, վորոնք

ծառաներով ու աղախիններով յեկել բռնել եյին վանքի ամենալավ սենյակները վոչ այնքան իբրև ուխտավոր, վորքան իբրև ամառոդ: Նույն տեղն առանձնակի նստած եյին իրար կողքի գյուղի յերկու քահանաները, ամեն մեկի ձեռքին մի հովանոց, և աչքերը քաղցած գայլերի պես տնկել եյին դեպի ուխտավորների բնակարանների յերկայն պատըշգամբը, վորտեղ աղախինները և ծառաները սուրճի պատրաստություն եյին տեսնում սպիտակ սփռոցներով ծածկված սեղանների վրա:

Վանահայրը — խոզ կարած մի վարդապետ, կապայով և թասակը գլխին — իր բնակարանի պատշգամբում, զանգակատան տակ, նարդի յեր խաղում ուխտավոր ընտանիքներից մեկին պատկանող մի յերիտասարդի հետ:

— Դուք գնացեք համբուրեցեք, մինչև յես տեղաշորը կզցեմ ու բարգն ել տուն կածեմ, — ասաց Նատոն սկեսորն ու ամուսնուն:

Պառավալ Սաքուլի թևը, մտան յեկեղեցի, մոմ վառեցին, համբուրեցին, ծունք զրին, աղսթք արին, դարձյալ համբուրեցին, «գահգահիչ» ասել տվին քահանաներից մեկին, վորը շտապել եր ներս մտնել յեկեղեցի նրանց յետևից: Այդ բոլորը տեսց այնքան յերկար, վոր յերբ դուրս յեկան, Նատոն, բացանողի պատվերի համաձայն, արդեն անկողին եր պատրաստել յեկեղեցու պատի տակ, յետևի կողմը և հեռաները բերած իրեղենները թափել եր գատարի սենյակներից մեկում: Ծծի յերեխան լաց եր լեղատարի սենյակներից մեկում, վորը որորելով և «սը-սը» նում փոքրիկ աղջկա գոգին, վորը որորելով և «սը-սը» անելով ազարդյուն աշխատում եր լեցնել նրան:

Յեկեղեցուց դուրս գալուն պես Սաքուլը պառկեց անկողնում:

Սայրը թողեց նրան և գնաց հարսին ոգնելու, վոր անյակը կարգել գնեն: Սենյակը խոնավ և աղտոտ եր:

Այդ և հետևյալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառկած էր անկողնում յեկեղեցու պատի տակ: Գիշերները նրա մոտ նստած հսկում էր մայրը համարյա անքուն: Բարեբախտաբար այդ յերկու որը յեղանակը լավ էր, և Սաքուլը բավական լավ էր զգում իրեն: Յերրորդ որն առավոտյան մատաղը մորթեցին: Ամենալավ կտորները և մորթին տարան վանահայրը, տերտերները, տիրացուն և ժամկոչը, մնացածից շատը բաժանեցին հարևան ուխտավորներին, իսկ մասշուրը տարան գյուղի բոկոտան յերեսաները և կանայք, վոր հավաքվել էին հազար ու մի տեսակ ամաններ ձեռքներին:

Որը տոթ էր, շունչ քաշել չէր լինում: Յերեկոյան դեմ յերկինքը թխպեց. արագորեն սևադավ, հրեղեն կայծակներն սկսեցին պատռել ամպերի կուրծքը նախ հեռավոր ու խուլ, հետո ավելի ու ավելի մոտեցող և ուժգին վորտումներով. ողն սկսեց շարժվել և ցրտել. հետո հանկարծ այնպիսի մի ուժգին փոթորիկ բարձրացավ շրխկոտ իրար փոշով ու աղբով: Մի ինչ-վոր ցուրտ բան, կլորիկ յերեսին, վոր վերմակի տակ պառկած դիտում էր մուկանած բնության այդ արնավերքը: Մի կոտորակին հետևեց յերկրորդը, յերրորդը... ավելի ու ավելի հաճախ ու խոշոր մակի տակ: Նույն րոպեյին զգաց, վոր կարկտախառն անձրևը թակում է վերմակը: Նատոն ձեռաց վազացրեց մի մեծ կապերտ և ձգեց նրա վրա: Պատափն էլ մի յերկու տոպրակ բերեց և ձգեց կապերտի վրա:

Սաքուլը կուչ էր յեկել այդ ծանրության տակ, ճընշվելով ոգի պակասությունից, և ականջ էր դնում, թե ինչպես կարկտախառն հորդառատ անձրևը շփշփոցով թափում էր տոպրակներն ու կապերտը, թե ինչպես յերկին-

քը գողգողում էր անեղագոչ վորտումներով համարյա թե անընդհատ, թե ինչպես հառաչում ու շառաչում էյին ընկուղենին և մյուս ծառերը փոթորկի ուժգին թափահարումներից: Նա զգաց, թե ինչպես անձրևի ջրից գոյացած մի առվակ ծլլալեն ներս խուժեց բարձի վրայով, անախորժ սառնությամբ սողաց ականջի մոտով և սկսեց գուբ կապել տակը, ծծվելով ներքնակի մեջ: Առվակներ էյին, վոր վազում էյին անկողնի կողքերից:

Կինն ու մայրը, հորդահոս անձրևի տակ թրջվելով, շփոթված, չէյին իմանում ինչ անեն: Բացանողը պատվիրել էր, վոր հիվանդը յերեք որ ու գիշեր պետք է պառկած մնա խաչի տակ բացոթյա, մինչդեռ յերեք որ ու գիշերը դեռ չէր լրացել, իսկ հիվանդին այդ հորդահոս անձրևի տակ թողնել անկարելի էր:

— Աղջի, վեր առնենք տուն տանենք, — ասում էր պառավը:

— Բա վոր իրեք որը չի թամամել, — առարկում էր Նատոն:

— Աղջի, բա ես անձրևը չեմ տեսնում:

— Դե ասում եմ վորտեղ վոր ա՛ կկտրի:

— Վճրդիան կկտրի, աղջի, տես, ե, վոնց ա հուրհրատում. չիրավի, անձրևը կարծես միտք չուներ կտրվելու: Այժմ կարկուտն էլ անձրևի յեր փոխվել և ջրերը թափվում էյին այնքան հորդ ու առատ, վոր նրանց թանձրության մեջ յերկնքի փայլատակումները հազիվ էյին լուսավորում մթազնած յերկիրը: Յերկնքի հաճախ անընդհատ վորտաի ձայները, անձրևի շփշփոցը, մոտակա ձորակի միջով վազող ջրերի քջքոցը և ծառերի շառաչը միախառնվելով այնպիսի մի ժխոր էյին բարձրացրել, վոր իրար մոտ կանգնած հարս ու սկեսուր հազիվ էյին լսում իրար ձայն:

Սաքուլը, անկողնու մեջ կուչ յեկած, զգում էր, թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները

շատանում են և վերմակն անձրևի ջրերից թրջված տոպրակներին ու կապերտից հետոհետե խոնավանալով ճնշում են իր վտիտ մարմինը: Ոգ չկար, վոր շնչեր և շնչածն ել բաղնիքի տաք գոլորշու պես մի բան եր, վորից քիչ եր քնում խեղդվեր: Տեսնելով, վոր այլևս չի կարողանում դիմանալ, վրայի ծանրութունը մի կողմ շարտեց և նստեց անկողնում: Այժմ անձրևն սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը:

— Տո, բա դուք աստված չունեք. ինձ խո սպանեցիք ըստեղ, — կանչեց նա:

Կինն ու մայրը շտապեցին նրան վերկացնել և հորգահոս անձրևի տակ մի կերպ տեղափոխեցին սենյակ:

* *

Յերեք որվա ուխտն արդեն կատարված եր, թեև Սաբուլը յերրորդ որվա գիշերը չեր անցկացրել բաց յերկրնքի տակ: Չորրորդ որը «թելեփկն» քաղաքից յեկավ, վոր մեր ուխտավորներին տուն տանի: Սաբուլին պառկեցրին «թելեփկի» մեջ ուժից բուրբուկին ընկած: Ճանապարհին մի գլուխ բղավում եր կողերի մեջ զգացած անտանելի ծակոցներից. գաղարում եր բղավելուց այն ժամանակ միայն, յերբ հազը բռնում եր: Հագում եր չոր ու թուլ, վորի ժամանակ ձայնը կարծես հորից եր դուրս գալիս: Յերբեմն պարզապես շնչասպառ եր լինում: Մայրն ու կինը նստած եյին կողքին և հետները վերցրած գինու շից յերեսին շուր ելին ցրցամ տալիս, վոր շունչը յետ բերի:

* *

Թախտի վրա, անկողնու մեջ պառկած եր Սաբուլը, պուխը կապած սպիտակ փաթաթանով, վորի տակից դուրս են պրծել յերկարացած մազերը, և քրտնքից ու կեղտից թաղիք գարձած կպել վոսկրացած ջուրքերին: Դեմքին

ճնացել ե միայն քիթը խոշոր ու սուր, և աչքերը, անաղին ու պսպղուն ապակու պես նայում են բաց դռնով դեպի դուրս: Այնտեղ ամառվա միջորեյի արևը հրաշեկ ճառագայթներով կիզում ե դիմացի տան պատը և այն աստիճան շողշողում, վոր ուղիղ նայելիս մարդու աչքերը ցավում են: Ուղղակի դռան առջև, ստվերի մեջ նստած ե փողոցի պառավ շունը և, կարմիր լեզուն հանած, հեթեթում ե տապից: Սաբուլը բարձն ի վեր կիսանստած, անթարթ նայում ե դուրս բթացող հայացքով և ծանր շունչ քաշում: Յերկու որ ե, վոր կողերի մեջ այլևս ծակծկոցներ չի գգում. հազը ևս քչացել ե. բայց այնտեղ, ներսը, ինչվոր տարրինակ դատարկութուն ե գգում. կարծես թորը, սիրտը և ամբողջ փորտաիքը հանել դուրս են թափել:

Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած ե մեանոդ վորդու կողքին և թաշկինակով քշում ե ճանձերը նրա դեմքից: Նստոն որորոցի մոտ չոքած՝ ծիծ ե տալիս յերեխային և հուսահատ հայացքով անթարթ նայում սեյակի պուճախին, վորտեղ աններկ գաջն առատորեն ծծել ե գետնի խոնավութունը և տեղ-տեղ թափվել: Նրա հալացքը ցույց ե տալիս, վոր նա առաջուց արդեն հաշտվել ե անխուսափելի թշվառության հետ: Թախտի վրա, լուսամուտի առջև չոքած ե փոքրիկ աղջիկը և աշխատում ե բռնել ապակիների վրա պզգացող ճանձերը:

Ծանր ու չարագուշակ լուություն ե տիրում սենյակում և դուրսը: Այդ լուությունը խանգարում ե խառ թուլեծախող մի կինտո, վորը թաբախը գլխին և կշեռքն ուսին անցնում ե դռան մոտով և իր առողջ թոքերի ամբողջ անցնում ե դռան մոտով և իր առողջ թոքերի ամբողջ թափով աղաղակում, «թուլեծ, թուլեծ, ախառի թուլեծ»: Նա մի բույս կանգ ե առնում բաց դռան առջև, նայում ե ներս, իր թավ ձայնով հարցնում՝ «խառը թուլեծ չեք ուզում» և, տեսնելով, վոր պատասխան չի ստանում, շարուզում և, տեսնելով, վոր պատասխան չի ստանում, շարուհակում ե ճանապարհը՝ կշեռքը շրխկըրկացնելով և փողոցն

աղմկելով իր հուժկու կանչով: Ու կյանքի առօրյան հիշեցնող այդ կանչը, մի բուրբ վանելով մահվան ուրվականը, լավում է մի առ ժամանակ ևս, մինչև վոր հետզհետե խլանալով լուռ է վերջապես, և մահվան ուրվականը նորից գալիս է իր փսփսուկը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չարագուշակ լուռթյան մեջ:

Հիվանդն այժմ պառկած է աչքերը փակ, և յեթե ծանր հեմքը չլինի, տեսնողը կկարծի, թե մեռած է: Պառավ մայրն անհանգստացած աչքը չի հեռացնում նրա դեմքից. նրա գլուխը սաստիկ շարժվում է. ըստ յերևույթին, ուզում է ինչ-վոր ասել, բայց չի համարձակվում: Վերջապես դադարում է ճանճերը քշելուց և, խոնարհվելով վորդու դեմքի վրա, շնչում է անհամարձակորեն:

— Սաքուլ ջան...

Սաքուլը կամաց բաց է անում աչքերը և նայում նրան:

— Ի՞նչ կլի, վոր տերտերին իմաց տանք:

— Տո, ելի տերտեր, — բացականչեց Սաքուլը գայրույթի այնպիսի հանկարծական բռնկումով, վոր մայրն ել կինն ել աղչեցին, թե վորտեղից նա, վորի ձայնը մինչև այժմ հազիվ էր լավում, հանկարծ այդպիսի մի ուժ հավաքեց իր մեջ: — Տո, ձեր տերտերն ու խաչը չէր վոր ինձ ես տեղը հասցրին... ել ի՞նչ եք ուզում ինձանից... թողեք, ելի, հանգիստ հոգիս տամ...

Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աչքերը լցվեցին արտասուքով, և նա այլևս վոչինչ չկարողացավ արտասանել:

— Դե յես ինչ գիտեմ, վորդի ջան, ասում եմ բալի...»

— արտասանեց մայրը կսկծալից և առանց խոսքը վերջացնելու լռեց, վորպեսզի այլևս չգրգռի վորդուն:

Ու առժամանակ խանգարված չարագուշակ ծանր լուռ-

թյունը գալիս է նորից թագավորելու մեռնողի սենյակում:

Սաքուլը կամաց-կամաց հանգստանում է և մտառու հայացքը տնկում դիմացի տան արևակեղ պատին: Յերկար լուռթյունից հետո նրա շրթունքները շարժվում են. ինչ-վոր բան է ասում, բայց դժվար է լինում վորոշել արտասանածը:

— Ի՞նչ, Սաքուլ ջան, — հարցնում է մայրը, խոնարհվելով նրա դեմքին:

Նատոն, վոր դեռևս շարունակում էր ծիծ տալ յերեսխային, դեմքը դարձնում է դեպի նա և ականջը սրում:

— Ասում եմ փոթրադչիկ Սերգոն, — շնչում է մեռնողը, ամեն մի խոսքի վրա հազիվ շունչը յետ բերելով, — են, վոր իրեք թուման եմ պարա... փիս մարդ չի... կլի, վոր չուզի... Համա թե ուզի... յարադս տվեք... Թե հերիք չանի... քամարս ծախեցեք... հոգիս չծանրացնեք...

Խեղճ պառավ մայրը միանգամայն կարկամում է և չի իմանում ինչ ասի:

Նատոն զգում է, թե ինչպես ամուր մի բան բռնում է բուկը: Գլուխը դնում է որորոցի վրա, դեմքը ծածկում վոնների մեջ և ամեն կերպ աշխատում է զսպել խեղդող հեծկտանքը:

Իսկ փոքրիկ աղջիկը շարունակում է մատները շարժել լուսամուտի ապակիների վրա, վոր բռնի ճանճերը, և նմանեցնելով կինտուլի կանչին, մեքենայաբար կանչում է կամացուկ՝ «թուլթա, թուլթա, ախառի թուլթա»:

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՇԵՏԱՊՆԴՈՒՄԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Այն գարեջրատունը, վորտեղ մենք սովորաբար հա-
վաքվում եյինք, հաճախում եր նաև պարոն Կոպիտկոն-
նա չափազանց կրոնասեր մարդ եր և միշտ հասկացնեք
եր տալիս, վոր բանի տեղ չի դնում և արհամարհում ե-
մեզ, հավանորեն այն բանի համար, վոր մենք, իրոք այն-
պիսի լեզվով եյինք խոսում, վոր հազիվ թե դուր գար
աստծուն, մինչդեռ պարոն Կոպիտկոն մինչև իսկ տասե-
րորդ բաժակից հետո ել անհրաժեշտ եր դտնում հիշել
աստծուն:

Դրա համար ել մենք նրան անվանում եյինք «Վի-
նոդրադների առաջին քրիստոնյան»:

Թիկնոցի մեջ փաթաթված, լուռ ու մտածկոտ մտնում
եր գարեջրատուն այնպես, ինչպես առաջին քրիստոնյա-
ները մտնում եյին գազաններով լի հռոմեյական կրկեսը
Յեվ յերբ նա բարձրացնում եր գարեջրի բաժակը, այդ
անում եր այնպիսի հեզությամբ, բարեպաշտությամբ, ինչ-
պես սուրբ Պետրոսի ժամանակներում քրիստոնյաները
բարձրացնում եյին բաժակը կատակոմբներում¹⁾: Նրա
միակ և միևնույն ժամանակ արհամարհանքի ուժեղ ար-
տահայտությունը «դե աստված ձեզ հետ» խոսքերն եյին»
վոր գարեջրատնից դուրս գալիս շարտում եր մեզ:

¹⁾ Կատակոմբ—նախկին քրիստոնյաների ստորերկրյա շերտեր:

Մենք մի քանի անգամ փորձեցինք խել նրանից
աստծուն, բայց նա միշտ բուժ համառությամբ շարժում
եր գլուխը և ասում:

—Այդ բոլորն իզուր ե, ինչ հավատով վոր յես ծնվել
եմ, նույն հավատով ել կմեռնեմ:

Յերբեմն նա սխալվում եր և ասում:

—Այն հավատով, վորով յես մնվել եմ...

Նա ծառայում եր թաղումների բյուրոյում և, ըստ
յերևույթին, այդ հանգամանքն ազդել եր նրա աշխարհա-
յացքի վրա, թեպետև ընդհանուր առմամբ բավականին
ծաղրանքով եր արտահայտվում իր պրոֆեսիայի մասին:

—Այ թե տանջվեցի յես այսոր մի պառավ կնոջ դա-
գաղը խցկելիս,—ասում եր նա: Բայց այս կրոնասիրու-
թյունը չեր խանգարում նրան թղթախաղով զբաղվելու:

Այնպես պատահեց, վոր մի անգամ, շաբաթ ուր, յերբ
մենք տաքացած «քսանմեկ» եյինք խաղում, նա խնդրեց,
վոր իրեն ել ընդունենք խաղի մեջ: Սկզբում նա տանում
եր, հավանական ե նրա համար, վոր նա խաչակնքվել եր:

Բայց հետո թուղթը չեկավ և տանուլ տվեց իր մեկ
շաբաթվա աշխատավարձի մինչև վերջին կուպեկը:

Խաղը շարունակելու և տարվածը վերադարձնելու
բուռն ցանկությունն ստիպեց նրան մեզանից հինգ քրոն
խնդրել:

—Մեծ ու ըախությամբ, թանկագին ընկեր,—ասացինք
մենք նրան,—բայց նախ գրավ տվեք մեզ ձեր ժամացույ-
ցը, և հետո հայտարարեցեք, վոր դուք աստծուն չեք հա-
վատում:

—Յերբեք,—բացականչեց Կոպիտկոն:

Դե այդ դեպքում մենք կխաղանք առանց ձեզ:

Մեր այս խոսքերը Կոպիտկոյի համար նշանակում
եյին այն, ինչ վոր հին Հռոմում կույսի հրամանը:
—Դե նետեցեք նրան գազանների առաջ:

Կոպիտկոյի դեմքը պարզ արտացոլում եր նրա ներքին սարսափելի տանջանքները:

Հրովմեյական կրկեսի գիշատիչ գաղանները փոխաբեն նրա առաջ կանգնեց իր կնոջ ուրվականը:

— Պարոնայք, — ասաց նա, տալով մեզ ժամացույցը, — և այսպես, լես աստծուն չեմ հավատում:

Իսկ յերբ ստացավ հինգ քրոն և խաղաթղթերը, բացականչեց.

— Բայց և այնպես հավատում եմ աստծուն և գնում եմ հինգ քրոն:

Յեվ տարվելով նա դարձյալ ասաց.

— Յես աստծուն չեմ հավատում:

Այնուհետև նշանի մատանու դիմաց պարտք վերցրեց ասա քրոն և տարվեց ասելով.

— Այնուամենայնիվ աստված կա աշխարհում:

Այնուհետև նա տարվեց իր թիկնոցը: Այլևս վոչինչ չունեի տարվելու, բացի կնոջից, վորը յեկավ նրա յետեւից և բռնեց վզակոթից:

Ասում են, վոր հետևյալ շաբաթ նա վանք ե մեկնում ապաշխարելու:

Յեվ արդեն այնտեղից գարեջրատան տիրոջը նվեր ուղարկեց մի համրիչ (թագրեհ):

ԳՈՎՔ ԱՍՏՄՈՒՆ

Կիրակնորյա դպրոցի դասերից հետո գյուղական քահանա հայր Վաղյալիս իր սաներին տարավ զբոսանքի: Հայր Վաղյալի բարեպաշտ խրատները պետք ե հասկացնելին դպրոցականներին աստծու ստեղծած բնության իմաստությունն ու վողորմածությունը:

Կանգ առնելով անտառի փոքր մարգագետնի մոտ, հայր Վաղյալը ցույց տվեց յերեսմաներին լեռները և անձայրածիր հովիտը:

— Այստեղ, գավակներս, մենք ակնհայտ կերպով տեսնում ենք աստծու գործերի վողջ գերիմաստությունը: Տեսնում ենք արհեստանոցներ, ճանապարհներ, լեռներ, անտառներ: Ոձապտույտ են տալիս առուները, անտառները: Ոձապտույտ են տալիս առուները, անտառները: Լեռների լանջերին ծաղկել ե աշնանային հավամրգին: Սովորեցեք գավակներս, սիրելի ամեն բան ստեղծողին: Հա, մենք կարող ենք նստել: Այո... մեծ ե յերկնային հոր թագավորությունը: Մտքով տեսնում եմ, որինակ, Կուբայի կղզիների հրաշագեղ առավոտը, տեսնում եմ այնտեղ ծխախոտի պլանտացիաները: Խոնարհաբար հիշում եմ աստծու անունը, վասնզի նրանք ել ստեղծած են արարչի ձեռքով:

Տրոպիկական բնությունը հարստությամբ ոժտել ե հրաշալի կղզիները: Հասել ե առատ բերքը առաջնակարգ ծխախոտի: Աստված ստեղծել ե նեգրերին, վորպեսզի աշխատեն նրա պարգևների վրա: Ամենաբարձրյալս ուղղու-

թյունն է տալիս նեգրերի ձեռքերին, փորպեսզի չորացնեն այս բուրավից տերերը: Այնտեղից ծովերի և ովկիանոսները վրայով այդ տերերները տանում են աշխարհիս բոլոր կողմերը: Մեզ մոտ ել են բերում: Աստված չի թողնում փոր նավերը կործանվեն. իր ամենահզոր ձեռքով նա պահպանում է ծովագնացների կյանքը: Հետո նավը մոտենում է ափին և արկղները կանոնավոր կերպով դարսում են նավահանգստում: Ահա, տեսե՛ք, յերեխաներ, իմ ձեռքում հենց այժմ գտնվում է այդպիսի սիգար, ժրաջան նեգրերի աշխատանքը: Տեսնում ե՞ք, յես սիգարը վառում եմ: Այդ անում եմ մեծ յերախտագիտությամբ դեպի աստված, փոր Հավաննայի պլանտացիաները պահպանել է ամենայն շարիքից...

— Այո, — շարունակեց նա, բաց թողնելով ծխի քուլաները, դուք զգում ե՞ք, ինչպես է բուրում սիգարը: Ինչպես ծուխը բարձրանում է զոհաբերության խնկի նման: Իմացե՛ք, փոր ծխում եմ միմիայն վորպես բարյացակամության նշան դեպի սևամորթ հողագործները, փորոնք գովերգում են ասածուն ծխախոտի լավ բերքի համար:

— Այո, զավակներս, ամեն բանում ապավինում ենք աստծու կամքին: Ուր փոր նայես, ամենուրեք կտեսնես նրա որհնության հետքերը: Որինակի համար, նայեցե՛ք, ինչպես բազմերանգ զարդարվել է բնությունը, ինչպես աշնանային սաղարթները խաղում են բոլոր գույներով: Իսկ ամենից պայծառ բոցավառվում են արոսենու հրեղեն պտուղները: Սակայն, զավակներս, աստված չուզեց իրեն փառաբանելու համար վոգևորել մարդկանց միմիայն գույներով: Մարդկային հոգիների փրկիչն ու հովանավորողը գիտե մեր անցողիկ կարիքները, նա հասցնում է բանջարեղենը և հյութալի պտուղները և մինչև իսկ արոսենու կարմիր հատապտուղները դրել է ի սպաս մարդուն: Մարդիկ վաղուց ի վեր տառապում են հոգեկան և մարմ-

նական ցավերով: Տկար մարմինը նաև տկարացնում է մարդկային հոգին: Յեվ ամենախմաստունն արգեն վաղուց ցույց է տվել մեզ զանազան պտուղներ, բույսեր և արոսենու: Նրանցից պատրաստվում են բուժիչ միջոցներ և թրբմոդիներ: Մարդիկ առաջնորդվելով աստվածային նախախնամությամբ, արոսենուց ևս պատրաստեցին այդպիսի փրկարար ըմպելիք:

Հայր վացլավը բարեպաշտորեն գրպանից հանեց ողու մեծ շիշը: Շրջելով շիշը բերնին և խմելով վոսկեգույն լիկյորը, նա յերանելությամբ յերեսը պարզեց դեպի յերկինք: Հետո շիշը դրեց կողքին և շարունակեց.

— Այո, զավակներս, աստվածային անսահման գթասրտությունը մեզ բերում է խորը մտածմունքներ: Ամենից լավ է տարվել նրանցով բնության զրկում, վորովհետև յերկրիս վրայից ամենափոքրիկ բզեզն անգամ արարչի գովքն է անում: Նայեցե՛ք ձեր շուրջը գտնվող այս արատությանը: Ահա բացատրում ծաղիկներն են բուրում, արատությանը: Ահա բացատրում մոլորակներն են աստծու ստեղծած արարածները: Ճյուղերի վրայի թռչունները, ծառերի սկյուռուները, աղվեսներն իրենց բներում, այս բոլորքի ամենաբարձրյալի ձեռքերի գործերն են: Նա բարձրից ցույց է տալիս իր սերը և ցանկանում է աջակցել աղքատ մարդկանց: Իրա համար ել անտառները և դաշտերը բնամարդկանց: Իրա համար ել անտառները և դաշտերը բնակեցրել է բազմաթիվ անբան արարածներով: Ապրում են նրանք մարդկանց ոգտի և աստվածային մեծագույն փառքի համար:

Ահա, որինակ, նապաստակը, վորին դուք գիտեք: Սպանված լինելով աստվածային անհասկանալի գթասրտությամբ, նա հրաշալի ուտելիք է լինում: Նամանավանդ սերուցքի մեջ տապակած փղնաշարը: Այնպիսի համեղ բան է այդ, փոր իրոք ապացուցում է մարդու վո-

չընչութիւնը աստձու կամքից անկախ, քանի վոր առանց նրա վորորմած թուլտվության միթե կարող եյի յես գրպանիցս հանել տապակած նապաստակի այս հրաշալի կտորը: Հարց եմ տալիս ձեզ, միթե մարդկային մեղապարտ ցեղը կարող եր այդ անել առանց աստվածային թուլտվության:

Տերտերը բաց արավ թղթով փաթաթած նապաստակը և տնտեսորեն հոտ քաշեց նրանից: Յերեխաները նախանձով թուքները կուլ տվին:

— Իսկ յերբ կարում եմ այն, — շարունակեց տերտերը, — կտրտելով նապաստակը և խոշոր կտորներ տանելով բերանը, այն ժամանակ լիովին զգում եմ ամենակալի հոգատարութիւնը դեպի մարդիկ: Հոգևոր աչքերով տեսում եմ վողջ բնութիւնը, մարդկային մտքին անհասանելի նրա ամենահզոր ձեռքերի գործը...

Նապաստակի վրայից խմեց ողին և վերջացրեց:

— Ունայն ե մարդկային կյանքը և դժբախտ մարդկային ցեղը: Բայց մարդ ավելի դժբախտ կլիներ, յեթե աստված խլեր նրանից քունը: Ճշմարիտ եմ ասում, կարելի յերարհներգ գրել այն բանի մասին, թե ինչպես հոգնած մարդը խաղաղ կերպով փակում ե իր աչքերը: Պարզ յերկնքի ասկ աստված նրան կազուրբիչ քուն ե ուղարկում և մարդ, շնորհապարտ աղոթքը շրթերին, ննջում ե աստվածալին բնության գրկում:

Հայր Վացլավը ձեռքերը խաչեց, վորի վրա և վայրկենապես խումբաց: Մանուկներն անշարժ լսում եյին իրենց ուսուցչի քթից դուրս լեկող գեղգեղանքները՝ ի փառս աստծո:

Ն. ՈՍՏՐՈՎՍԿԻ

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿՈՓՎՈՒՄ ՊՈՂՊԱՍԸ

(Հասված)

Ձեզանից ով վոր տոնի ժամանակ յեկել ե իմ տունը դասը պատասխանելու՝ թող վեր կենա:

Սքեմ հագած մի փքված ու վղից մի ծանր խաչ կախած մարդ սպառնալից կերպով նայում եր աշակերտներին:

Նրա փոքր ու չար աչքերը ծակում եյին մինչև նրատարանները բարձրացած վեց յերեխաներին՝ չորս տղաներին ու յերկու աղջիկներին, վորոնք յերկչոտորեն նայում եյին նրան:

— Դուք նստեցեք. — ձեռքով նշան արեց տերտերն աղջիկներին:

Նրանք թեթևացած հառաչեցին ու արագ նստեցին: Հայր Վասիլիի պատիկ աչքերը կենտրոնացան մյուս չորսի վրա:

— Յեկեք այստեղ, աղամբյակներս:

Հայր Վասիլին վեր կացավ, սեղանը մի կողմ մղեց ու կիպ մոտեցավ խմբված յերեխաներին:

— Սրիկաներ, ձեզանից ով ե ծխում:

Այս հարցին չորսն ել կամաց պատասխանեցին.

— Մենք չենք ծխում, տեր հայր:

Տերտերի դեմքը շառագունեց:

—Չէք ծխում, սրիկաներ, բա ո՞վ է մախորկան գցել խմորի մեջ: Չէք ծխում, հիմա մենք այդ կտեսնենք: Շուռ ավեր գրպաններդ, շուռ: Բան եմ ասում, շուռ ավեր:

Նրանցից յերեքն սկսեցին իրենց գրպանների պարուհակությունը դատարկել սեղանի վրա:

Տերտերն ուշադրությամբ նայեց գրպանների կարերը՝ ծխախոտի հետքեր փնտռելով, բայց վուչինչ չգտավ ու սկսեց չորրորդ, սևաչվի, գորշ բլուզ և ծնկների վրա կարկատաններ գցված կապույտ շալվար հագած յերեսխային հարցուփորձել:


—Իսկ դու ինչո՞ւ յես արձանի նման կանգնել:

Սևաչվին դապած ատելությամբ նայելով խուլ պատասխանեց.

—Յես գրպան չունեմ,—և ձեռքը քսեց կարերին:

—Ի՞նչ, գրպան չունենա: Կարծում ես թե յես չեմ իմանում, թե ո՞վ կարող եր այդպիսի ստորություն անել՝ խմորը փչացնել: Կարծում ես, վոք հիմա ել կմնաս դպրոցում: Վոչ, սիրելիս, դա քեզ ձրի չի նստի: Անցած անգամ մայրդ աղաչեց թողնել քեզ դպրոցում, իսկ այս անգամ ալլևս վերջ: Դասարանից դուրս:—Յե՛վ պինդ բռնելով նրա ականջը՝ շարտեց միջանցք ու դուռը փակեց յետևից:

Դասարանը լեց ու կուչ յեկավ: Վոչ վոք չհասկացավ, թե ինչու Պավկա Կորչագինին վռնտեցին դպրոցից: Միայն Սերյոժկա Բրուզժակը՝ Պավկայի ընկերն ու բարեկամը տեսել եր, թե ինչպես Պավկան մի բուռ մախորկա յեր ածել գատկական բաղարջի խմորի մեջ, այնտեղ, տերտերի խոհանոցում, վորտեղ վեց հետամնաց աշակերտներ սպասում էին նրան: Նրանք ստիպված էին դասը պատասխանել արդեն տերտերի տանը: Արտաքսված Պավկան նստել եր գլխավոր սանդուխի վերջին աստիճանի վրա և մտածում եր, թե ինչպես գնա տուն և ինչ ասի այնքան



հոգևոր և առավոտից մինչև ուշ գիշեր ակցիզային տես-
չի մոտ վորպես խոհարար աշխատող մորը:

Պավկային խեղճում էյին արցունքները:

— Բա ինչ անեմ յես հիմա: Յե՛վ միշտ ել այս անի-
ծյալ տերտերի պատճառով: Յե՛վ ինչո՞ւ մախորկա գցեցի-
նրա խմորի մեջ: Սերյոժկան դրդեց. «արի, — ասաց, — այդ
փասակար ի՞ժիհ մի բան գցենք»: Ու գցեցինք: Սերյոժկա-
յին վոչինչ չի լինի, բայց ինձ հավանաբար կարտաքսեն:

Այդ թշնամությունը հայր Վասիլիի հետ վաղուց եր-
սկավել: Մի անգամ, յերբ Պավկան կռվեց Լեվչուկով Մի-
շայի հետ՝ նրան «առանց ճաշի» թողին: Յե՛վ վորպեսզի
դատարկ դասարանում չարություն չաներ՝ ուսուցիչը չարա-
ձճիին տաբալ մեծերի մոտ՝ յերկրորդ դասարանը և Պավ-
կան նստեց վերջին նստարանի վրա:

Նիհար ու սև բաճկոն հագած ուսուցիչը պատմում
էր յերկրի ու լուսատուների մասին, իսկ Պավկան զարման-
քից բերանը բաց արած լսում էր, վոր յերկիրն արդեն-
բազմամիլիոն տարի յե ինչ գոյություն ունի, և վոր աստ-
ղերն ել մոտավորապես յերկրի նման են: Այն աստիճան
էր զարմացել լսածներից, վոր նույնիսկ ցանկացավ վեր-
կենալ և ասել ուսուցչին, թե «կրոնի դասագրքում այդ-
պես չի գրված», բայց վախեցավ պատժվելուց:

Տերտերը միշտ ել հինգ եր գնում Պավկային կրոնի
համար: Բոլոր Վարք սրբոցը, Հին և Նոր ուխտը նա ան-
գիր գիտեր: Լավ գիտեր, թե վոր ո՞րը աստված ինչ է
ստեղծել: Պավկան վորոշեց հարց ու փորձ անել հայր Վա-
սիլին: Հենց հաջորդ կրոնի դասին, հաղիվ եր տերտերը
նստել բազկաթոռում, Պավկան ձեռքը բարձրացրեց և խո-
սելու թույլտվություն ստանալով կանգնեց:

— Տեր հայր, հապա ինչո՞ւ մեր վերի դասարանի ուսու-
ցիչն ասում է, թե յերկիրը միլիոն տարի յե, ինչ կա, և
վոչ թե այնպես, ինչպես կրոնագիտության մեջ է, այ-

սինքն հինգ հազ... — և անմիջապես նստեց հայր Վասիլի
ծվան գոռոցից:

— Ի՞նչ ասիր, գարշելի: Այ թե ինչպես ես սովորում
ասածո խոսքը:

Պավկան հաղիվ եր բերանը բաց արել, յերբ տերտե-
րը բռնեց նրա ականջներից ու սկսեց գլուխը խփել պա-
տին: Մի ըոպե անց, նրան շարգված ու սարսափահար
վիճակում շարտեցին միջանցք:

Մայրն ել մի լավ դնգստեց Պավկային:

Մյուս ո՞րը մայրը գնաց դպրոց և հայր Վասիլին
աղաչեց, վոր իր վորդուն յետ ընդունի: Այդ որվանից
Պավկան իր վողջ եյուլթյամբ ասեց տերտերին: Ատում եր
ու վախենում: Վոչ վորի չեր ներում նա իրեն հասցրած
մանր վիրավորանքները: չեր մոռանում նաև տերտերից
ստացած անտեղի ծեծը, ուստի և չարանում եր ու ամ-
փոփվում ինքն իր մեջ:

Ուրիշ շատ մանր վիրավորանքներ ել կրեց Պավկան
հայր Վասիլից — մտցնում էր նրան դուռն յետևը, ամբողջ
շաբաթներով դաս չեր հարցնում, և դրա համար ել զատ-
կի նախորյակին ստիպվեց հետամնացների հետ գնալ տեր-
տերի տունն ու քննություն տալ: Այդտեղ ել, խոհանո-
ցում Պավկան մախորկան ածեց գատկական բաղարջի խմո-
րի մեջ:

Վոք վոք չեր տեսել, բայց և այնպես տերտերն ան-
միջապես իմացավ, թե ում գործն է դա:

...Իսպը վերջացավ, յերեխաները թափվեցին բակն ու
ըրջապատեցին Պավկային: Նա չե՛լ փքված լուռ եր: Սե-
րյոժկա Բրուզժակը դասարանից դուրս չեկավ, զգում եր,
վոր ինքն ել հանցավոր է. բայց վոչ մի բանով չեր կա-
րող ոգնել ընկերոջ:

Ուսուցչանոցի բաց լուսամուտից դուրս ցցվեց դպրո-

ցի վարիչի՝ Յեֆրեմ Վասիլյեվիչի գլուխը և Նրա թավ
ձայնն ստիպեց Պավկային սարսուռալ:

— Կորչագինին անմիջապես ուղարկեցեք ինձ մոտ, —
գոչեց նա:

Յեվ Պավկան խոցված սրտով գնաց ուսուցչանոց:

Մ. ԶՈՇՁԵՆԿՈ

ՍԱՏԱՆԱՆ

Իսկ այժմ, բարեկամներ, ձեզ մի բան պատմեմ, միտյո՞ւ
թե շատ չծիծաղեք ինձ վրա: Այդ պատմութիւնն, աստ-
ված վկա, յես չեմ հնարել և ճիշտն ասած, այդպիսի յե-
րեվակայութիւնն վոչ մի ժամանակ ել չեմ ունեցել:
Իսկ այդ պատմութիւնն ինձ պատմել ե իմ յերկրացին՝
ռազմական ողաչու Պրոկոպչենկոն՝ Սեմյոն Աֆանասյեվիչը:

Այդ պատմութիւնը մի կնկա՝ Անիսիայի մասին ե:

Այդ Անիսիան վերադառնում եր վանքից՝ Պոչայե-
վյան մենաստանից, ուր ուխտի յեր գնացել: Վերադառ-
նում եր, ի հարկե, զոտքով, իսկ վանքից մինչև իրենց գյու-
ղը՝ Սարուժկին՝ կլինեք յերեսուն վերստից ավելի, ավե-
լին ել մի յերեք վերստ:

Ես կնիկը՝ Անիսիան մի թափով տասնհինգ վերստ ան-
ցավ, իսկ տասնվեցերորդի վրա հալից ընկավ:

Ել վոնց հալից չընկներ. վանքի յուրաքանչյուր աստ-
վածահաճո սրբին յերկրպագել եր. եղ դեռ հերիք չե, բո-
լոր հրաշագործներին ու արդարակյացներին և նույնիսկ
յուրաքանչյուր փոքրիշատե նկատելի նահատակին ել
առանձին: Անգամ գերապատիվ հայր Մառոյինս Ծիծաղելի
յե նույնիսկ: Իսկ դրա փոխարեն վոչ վոքի վոչ մի վիրա-
վորանք չեք հասցրել:

Յեվ, ի հարկե, յերկրպագութիւններից Անիսիայի
գլուխը պտտվում եր: Յեվ այն աստիճան այդ սիրասուն եյա-

Կի գլուխը պտտվում եր, վոր տասնվեցերորդ վերստում եր
վնչ մի քալ շեր կարող գցել, թեկուզ կովի պես բառաչի:
Մի խոսքով կնկա բոլոր վոսկորները անասելի ցնցվեը
եյին: Չափազանց շատ եր լերկրպագել:

Տասնվեցերորդ վերստում մեր կնիկը փովեց գետին
Տիչկինո գյուղի առջև, բերանը լայն բաց արեց շնչելու
համար, պառկեց առվի ճիշտ կողքին ու չիմացավ թե ինչ
անի:

—Այ քեզ բան, — մտածում ե Անիսիան: — Այս բոլորը
սրբերին լերկրպագելուց առաջացավ: Ք, անձն ավելի
թանգ ե:

Յեվ ահա պառկել ե Անիսիան առվի կողքին — ձախ
կողմը Տիչկինո գյուղն ե, աջը՝ հաճարի արտը, իսկ գե-
մուղեմը՝ անտառն ու ճահիճը:

Յեվ խիստ նեղվեց Անիսիան, վոր փովել եր գետին
ճահճի մոտ, այն ել ոտար տեղ Տիչկինո գյուղի առջև:

—Ախ, — մտածում ե նա, — յեթե յես այստեղ շունչս
փչեմ, ի հարկե, նկատի կառնվի: Չե՞ վոր աստված ամեն
բան տեսնում ե: Բայց շատ անախորժ բան ե այստեղ
մեռնել. — կովը կարող ե հոտ քաշել ինձանից, վոչխարը
կարող ե կոխոտել, վոր մեկն ասեմ: Ախ, կլանքիս կեսը
կտայի, միայն թե Ստրուժկի ընկնեյի: Ինչպե՞ս թե կլան-
քիս կեսը, դեռ հոգիս ել սատանային կծախեյի: Ել ինչ
ուզում ե լինի: Ախար այստեղ անիմաստ ե մեռնել, —
ոտար գյուղ, անտառ, ճահիճ, ճահճային աղտեղու թյուն-
ներ. — թնւ:

Անիսիան դեռ նոր եր այս մտքերն արել, մեկ ել մի
զարմանալի աղմուկ ու ճթճթոց լսեց:

Շուռ չեկավ նայեց ու ես ի՞նչ բան ե, — մտածեց: Չի
հավատում իր աչքերին. հենց առվի առջև, գյուղացու հա-
ճարի միջին մի մեծ շինություն: Ասես տուն ե՞ տուն չի,
մեքենա չե՞ մեքենա չի, ավտոմոբիլ ե՞ ավտոմոբիլ չի,
բայց անիվներ ունի ու կարծես գնում ե:



— Մորիլ է,— մտածեց Անիսիան ու հանկարծ վախեցաւ:— Ո՛յ, մամա ջան, ցնծա՛, ով սուրբ կույս աստվածածին... Ախար վճնց ես մորելը շոշից յեկավ ու կանգնեց առվի մոտ: Թ՛նւ, գրողը տանի քեզ,— կրկնում է նա մըտքում:

Վեր կացավ նստեց, աչքերը շփեց. հո չէ՛մ աչքախաբ յեղել,— մտածում է նա: Բայց չէ: Կանգնել է մեքենան հաճարի վրա, իսկ մեքենայի տակը փորի վրա մի պատկառելի մորուսով մարդ պտուլտ է գալիս:

Անիսիան նայեց մարդուն, բայց սա սովերի նման լուռ է:

Վատ զգաց իրեն մեր կնիկը, վոր նա լուռ է և դրա համար ել դիտմամբ դայրացկոտ ձևով ասաց.

— Ի՞նչ էս սուս անում, այ տերտեր, շան վորդի: Ի՞նչ էս քրիստոնեյի հաճարի վրա փորովդ պտավում: Վոր պետք լինի Տիչկինոյի գյուղացիներին կարող եմ ասել: Վորտեղ է լաված, այ տերտեր, վոր մորելով հաճարի վրա պտուլտ գան... Յերկի մի բան էս կորցրե՛ր:

Մարդը վեր կացավ, նայեց սուվին ու թավ ձայնով ասաց.

— Կորցրել եմ: Ծուռտիկ-մուռտիկն եմ կորցրել: Իսկ դու, այ մեր, ձեռ քաշի հայտնելուց: Յես հիմա շուռ կտամ, ի՞նչ անեմ, վոր փչացավ: Իսկ դու, ի միջի այլոց, ինչո՞ւ յես պառկել:

Թեթևութուն զգաց Անիսիան տեսնելով, վոր այդ մարդը ձայն հանեց:

— Ո՛յ, տեր հայր,— ասում է,— վճնց չպառկեմ, քանի վոր ստիպված եմ: Չափից դուրս շատ ծնրադրեցի, յերկրպագեցի են վանքում, ենքան յերկրպագեցի, վոր այստեղ արդեն ուժից ընկա: Բոլոր վոսկորներս ցնցվեցին ու հողերից դուրս յեկան: Դրա համար ել պառկել եմ առվի կողքին: Չի՛ լինի, վոր ինձ եղ մորելով տանես, տեր հայր:

— Ինչո՞ւ չէ,— ասաց մարդը,— կարելի յե:— Իսկ ուր տանեմ քեզ:

— Դե ասում եմ, ելի, Ստրուժկի տանես պիտի, տեր հայր: Եսպես, միշտ շոշով կգնաս, իսկ հետո դեպի ձախ: Առաջին տունը Մարիամինն է, յերկրորդը՝ Պետրովիչինը, ի՞նչ ել ծվարել է դրա կողքին:

— Իմացա,— ասաց մարդը:— Դե նստիր, մայրիկ:

Նստեցրեց կնկան մորելում, փոկով կապեց, վոր վորտաներում ցած չընկնի:

— Պինդ կաց, մայրիկ.— ասաց նրան:

— Այ շնորհակալ եմ,— ասաց կնիկը:— Միայն թե, տեր հայր, շատ արագ չգնաս: Չեմ կարող դիմանալ, յերբ արագ են քշում...: Չմոռանաս, շոշով գնա, լավ ճամբա յե...

Մարդն ել նստեց ու մեկ ել մի բան դրդաց ու հանկարծ մղվեց առաջ ու գետնից պոկվեց... առուն, Տիչկինո կարծ մղվեց առաջ ու գետնից պոկվեց... ու ամեն բան սկըսեց սուրալ...

Կնիկը մի հոգոց հանեց, բռնեց կողքի ձողն ու անզգայացաւ: Ուզեց խաչ հանել՝ ձեռքը չի շարժվում: Ուզեց զրպանից հավտքը շարժել՝ վոտքը չի ծալվում: Ուզեց զրպանից հանրապես վոչինչ չի գտնում: Յեվ ընդունել որհնած ջրի սրվակը՝ զրպանը չի գտնում: Ստանան է,— մտածեց կնիկը ու մեռելի պես քարացաւ:

Ու հանկարծ, յերեք ըոպե անց.— «Ինչըրեմ, դուրս յեկեք, հասանք, էս ել քո հայրենի գյուղը՝ Ստրուժկին»:

Մեքենան կանգնեց դաշտում: Ժողովուրդն, ի հարկե, թափվեց: Չարմանում են, ծիծաղում, կնկան փեշից քաշ տալիս: Իսկ կնիկը վոտքերն ել չի շարժում, նստել է լետեցնում:

Քրոջ վորդիները հանեցին Անիսիային մեքենայից ու տարան տուն: Դրին թախտի վրա, բայց նա պառկել է այդտեղ և ուտելու բան ել չի ուզում:

Այս է ամբողջը, համարյա ամբողջն այն մասին, թե
ինչպես այդ կնիկը՝ Անիսիան թռավ սավառնակով: Բայց
կարծես պատմութիւնը չվերջացավ:

Յերբ իմ յերկրացին՝ ուղմական ողաչու Պրոկոպչեն-
կոն՝ Սեմյոն Աֆանասովիչը պատմեց մինչև այս կետը,
ապա հարցրեց մեզ.

— Իսկ հիմա, բարեկամներ, ի՞նչ էք կարծում, ի՞նչ
պատահեց այդ կնիկան:

Այդ ժամանակ մեզնից մեկը, ի հարկե, հոռետեսորեն
տրամադրված ու տխուր մի մարդ, յենթադրեց թե կնիկը մե-
ռավ: Մի ուրիշը՝ միջնակարգ դպրոցի ուսուցիչը կարծեց թե
Անիսիան մտավ կուսակցութեան մեջ: Իսկ յես ել, թե նա
դադարեց աստժուն հավատալ կամ թե դարձավ կաթոլիկ:

Բայց այս բոլորն էլ ճիշտ չեր: Պարզվեց, վոր դրա-
նից մեկ որ անց կնիկն ուշքի յե յեկել, սթափվել, ամե-
նախիստ կերպով հարց ու փորձ արել իր քրոջ վորդինե-
րին, թե ինչպես է տուն յեկել, և դառն արտասովելով
ազոթել բոլոր սրբապատկերների առջև ու հրամայել, վոր
տանեն իրեն վանք, վորտեղ ապրում է և այժմ: Մեզ ինչ
ինչ ուզում է անի, թքած դրա վրա:

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

ԱԳԱՆ ՏԵՐՏԵՐ

(Ռուսական ժողովրդական հեքիաթ)

Կար-չկար, մի տերտեր կար: Նա մեծ ծուխ ուներ, բայց այնքան ազան էր, վոր մեծ պասին խոստովանության համար վոչ վոքից տաս կոպեկից պակաս փող չէր վերցնում: Իսկ ով վոր տաս կոպեկը չբերեր, նրան չէր ել խոստովանեցնում, այլ սկսում էր նախատել:

— Ի՞նչ կոտորավոր անասունն ես, հա: Ամբողջ տարին չկարողացար տաս կոպեկ հավաքել հոգևոր հոր մոտ խոստովանելու համար: Չէ՞ վոր նա ձեզ՝ նզովախներիդ համար՝ աղոթում է աստծուն:

Մի անգամ ել այդ տերտերի մոտ խոստովանելու յեկավ մի զինվոր ու մի պղնձե հինգ կոպեկանոց դրեց սեղանի վրա: Տերտերն ուղղակի կատաղեց:

— Լսիր, անիծյալ, — ասում է նրան, — դու եդ վորտեղից մտածեցիր հոգևոր հորը պղնձե հինգ կոպեկանոց բերել: Ծաղրում ես, ի՞նչ է:

— Որհնիր, տէր հայր, յես վորտեղից դրանից ավելին ճարեմ: Ի՞նչ ունեմ, այն ել տալիս եմ:

— Գինեաները տանելու համար փող կա, իսկ հոգևոր հորը միայն մեղքերդ ես բերում: Այսպիսի դեպքերում դու թեկուզ մի բան գողացի կամ ծախի, բայց քահանադուն յին բեր այնքան, ինչքան վայել է: Միևնույն է, հենց մի անգամից ել կխոստովանես նրան թե՛ մեղքերդ, և թե՛ գո-

դու թյունդ, իսկ նա ել քո բոլոր մեղքերիդ թողություն կտա:

Յեվ առանց խոստովանեցնելու վնասեց տերտերն այդ զինվորին:

— Ու առանց տաս կոպեկանոցի չգաս ինձ մոտ:

Զինվորը հեռացավ ու մտածեց.

— Ի՞նչ անեմ եդ տերտերի հետ:

Նայեց ու տեսավ յեկեղեցու նախաբեմից մոտիկ դրված ե տերտերի ձեռնափայտը ու վրան ել ջրշան մորթե գլխարկը:

Արի մի փորձեմ այդ գլխարկը գողանամ. — ասաց ինքն իրեն:

Վերցրեց գլխարկը, կամացուկ դուրս յեկավ յեկեղեցուց և ուղիղ զինետուն գնաց: Այդտեղ զինվորը գլխարկը քսանհինգ ուռլով ծախեց, փողերը թաղցրեց գրպանում, իսկ տաս կոպեկ առանձնացրեց տերտերի համար, ապա վերադարձավ յեկեղեցին ու նորից գնաց տերտերի մոտ:

— Հը՞, բերի՞ր տաս կոպեկը. — հարցրեց տերտերը:

— Բերել եմ, տեր հայր:

— Իսկ վճարտեղից ճարեցիր, հողյակա:

— Մեղավոր եմ, տեր հայր: Մի գլխարկ գողացա ու ծախեցի տաս կոպեկով:

Տերտերը վերցրեց այդ տաս կոպեկն ու ասաց զինվորին.

— Աստված քեզ ների, իսկ յես ներում եմ ու թողություն եմ տալիս:

Զինվորը գնաց, իսկ տերտերն իր ծխականներին խոստովանեցնելուց հետո սկսեց յերեկույան ժամերգությունը, և վերջացնելուն պես պատրաստվեց տուն գնալ: Գնաց դեպի սեղան գլխարկը վերցնելու, տեսավ գլխարկ չկա ու այդպես գլխաբաց գնաց տուն: Հասավ թե չե, մարդ ուղարկեց զինվորի յետևից: Զինվորը յեկավ ու հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում, տեր հայր:

— Ճիշտն ասա, աչքի լույս, էմ գլխարկը չէ՞ս գողացել:

— Չգիտեմ, տեր հայր, ձերն եմ գողացել, թե ուրիշինը, միայն թե այդպիսի գլխարկ տերտերներն են դնում, ուրիշ վոչ վոք չի դնում:

— Իսկ վճարտեղից գողացար:

— Մեր յեկեղեցում, դրված եր ձեռնափայտի վրա՞ դասի մոտը:

— Այ շան վորդի, լես քո եսենցը-ենենցը, ի՞նչպես համարձակվեցիր քո հողևոր հոր գլխարկը գողանալ:

— Ախար, տեր հայր, դուք ինձ այդ մեղքը ներեցի՞ք ու թողություն տվի՞ք:

ԲԱՐԻ ՏԵՐՏԵՐԸ

(Ռուսական ժողովրդական հեքիաթ)

Կար ու չկար, մի տերտեր կար: Այս տերտերը մի մշակ վարձեց ու բերեց տուն:

— Դե հիմա, այ մշակ, լավ ծառայի, յես քեզ բաց չեմ թողնի:

Մի շաբաթ ապրեց մշակը և խոտհունձքն սկսվեց:

— Հասկա, հոգյակս, — ասաց տերտերը, — ասաված կամենա գիշերն անփորձ քնենք, լուսացնենք ու վաղը գնանք խոտը հնձելու:

— Լավ, տեր հայր:

Հենց վոր լուսացավ, շուտ վեր կացան ու տերտերն ասաց իր կնոջ.

— Յերեցկին, մեզ նախաճաշ տուր, գնում ենք խոտ հնձելու:

Յերեցկինը սեղանը գցեց, նստեցին յերկուսով ու մի լավ նախաճաշեցին: Տերտերն ասաց մշակին.

— Այ հոգյակս, արի մի անգամից ճաշն ել անենք և ապա մինչև կեսոր առանց հանգստանալու կհնձենք:

— Ինչպես ձեզ հաճելի յե, տեր հայր, ինչու չե, ճաշենք:

— Յերեցկին, սեղան գցի ճաշենք. — հրամայեց տերտերն իր կնոջ:

Կինը ճաշն ել տվեց: Նրանք ել մի յերկու գզալ կերան ու կշտացան:

Տերտերն ասաց մշակին.

— Արի, հոգյակս, մի անգամից նախընթրիքն ել անենք, իսկ հետո կհնձենք մինչև ընթրիքը:

— Ինչպես կամենում եք, տեր հայր, ուզում եք նախընթրենք:

Յերեցկինը նախընթրիքն ել տվեց: Նրանք նորից մի յերկու գզալ կերան ու կշտացան:

Միևնույն ե, հոգյակս, — ասաց տերտերը մշակին, — արի մի անգամից ընթրիքն ել անենք, գիշերն անցկացնենք դաշտում, առավոտն ել աշխատանքն ավելի շուտ կսկսենք:

— Ընթրենք, տեր հայր:

Յերեցկինը ընթրիքն ել տվեց: Նրանք մի յերկու գզալ կերան ու սեղանից վեր կացան:

Մշակը վերցրեց իր վերնագգեստն ու պատրաստվեց հեռանալ:

— Ո՛ւր ես գնում, աչքիս լույս, — հարցրեց տերտերը

— Ինչպես լիք ուր: Ինքներդ ել գիտեք, տեր հայր, վոր ընթրիքից հետո պետք ե պառկել ու քնել:

Գնաց մարազն ու մինչև լույս քնեց: Դրանից հետո տերտերն այլևս իր մշակին մեկ անգամից նախաճաշ ճաշ, նախընթրիք ու ընթրիք չհրամայեց:

ԱՅԾԻ ՔԱՂՈՒՍԸ

(Ռուսական ժողովրդական հեփիարթ)

Ապրում եյին մի մարդ ու կնիկ: Նրանք վոչ մի յեբէխա չունեցին, վողջ ունեցածը մի այծ էր: Ծերունին վոչ մի արհեստ չգիտեր, միայն արեխ եր հյուսում և դրանով ել ապրում էր: Այծը վարժվել էր ծերուկին և պատահում էր, վոր չերբ նա տնից դուրս եր գնում, այծն ել յետեիցն եր վազում: Մի անգամ ել ծերունին անտառ գնաց ծառի թարմ կեղև բերելու, այծն ել վազեց նրա յետեից: Հասան անտառ, ծերուկն սկսեց կեղև պոկել, իսկ այծը ման եր գալիս դես ու դեն և խոտ եր կրծոտում: Կրծոտեց, կրծոտեց, մեկ ել հանկարծ առջևի վոտքերը խրվեցին փխրուն հողի մեջ: Սկսեց փորփրել ու մի կճուճ լի վոսկի հանեց: Ծերուկը տեսավ, վոր այծը հողը փորփրում է, մոտեցավ նրան ու տեսավ վոսկին, անասելի ուրախացավ, շարտեց հավաքած կեղևները, ժողովեց փողերը, գնաց տուն և ամեն բան պատմեց կնոջը:

— Այ մարդ, — ասում է կնիկը, — եդ գանձն աստված հասցրեց մեզ մեր ծերուկյանը նրա համար, վոր այսքան տարի աղքատության մեջ աշխատել ենք: Իսկ հիմա մեր քեֆին ապրենք:

— Չէ, այ կնիկ, — պատասխանեց ծերուկը, — այս փողերը վոչ թե մեր, այլ այժի բախտով են գտնվել, այժմ մենք այժին մեզանից ավելի պետք է գուրգուրենք ու պահպանենք:

Այդ որվանից ել նրանք սկսեցին այժին իրենցից ավելի խնամել ու պահպանել, սկսեցին հոգ տանել նրան, իրենք ել լավ դրսովեցին — դրանից լավ ել անհնար էր: Ծերունին մոռացավ թե ինչպես են տրեխ հյուսում. ապրում եյին իրենց համար լիուլի ու անվիշտ: Բայց մի քանի ժամանակ հետո այծը հիվանդացավ ու սատկեց: Ծերուկը խորհուրդ արեց կնկա հետ՝ թե ինչ անենք:

— Յեթե այծը գցենք շներին, ասածո և մարդկանց առաջ մեղք արած կլինենք, քանի վոր մեր վողջ յերջանկությունը նրա միջոցով ենք ձեռք բերել: Ավելի լավ է գնամ տերտերի մոտ ու խնդրեմ, վոր թաղի այծը քրիտոնեյաբար, ինչպես ուրիշ ննջեցյալներին են թաղում:

Վեր կացավ ծերունին, գնաց տերտերի մոտ ու բարևեց:

— Վողջճւյն, տեր հայր:

— Վողջճւյն, որհնյալ: Ի՞նչ կա:

— Յեկել եմ, տեր հայր, քեզ մոտ մի խնդրանքով, —

մի մեծ դժբախտություն է պատահել մեր տանը՝ այծը մեռել է, յեկել եմ քեզ խնդրելու, վոր թաղես:

Հենց վոր տերտերն այս խոսքերը լսեց, խիստ բարկացավ, բռնեց ծերուկի մորուսը ու քաշ տվեց նրան դես ու դեն:

— Այ դու անիծյալ, ի՞նչ ասացիր, գարշահոտ այժդ թաղեմ:

— Ախր տեր հայր, այդ այծը բոլորովին հավատացյալ եր և քեզ յերկու հարյուր ուրբի յե կտակել:

— Լսիր, քավթառ շուն, — ասաց տերտերը, — քեզ ծածում եմ վոչ թե նրա համար, վոր կանչում ես այժ թաղելու, այլ թե ինչո՞ւ մինչև հիմա ինձ իմաց չես արել նրա վախճանվելու մասին, կարող է վաղճեց ե մեռել:

Վերցրեց տերտերը ծերուկից յերկու հարյուր ուրբի ու ասաց:

— Դե գնա շուտով տիրացուի մոտ ու ասա պատրաստություն տեսնի, վոր անմիջապես գնանք թաղելու:



— Գնաց ծերուկը տիրացուի մոտ ու ասաց.

— Նեղութուն քաշի, տիրացու, արի մեր տուն, ննջեցյալ կա:

— Ո՞վ է մեռել:

— Հո ճանաչում եյիք իմ այծը, նա յե մեռել:

Այս խոսքի վրա տիրացուն սկսեց ապտակներ տեղալ ծերուկին, մեկ ձախից, մեկ աջից:

— Մի ծեծիր ինձ, տիրացու, — ասաց ծերուկը: Ախր այծը գրեթե բոլորովին հավատացյալ էր և մեռնելիս քեզ հարյուր ուսուցիչ կտակեց թաղման համար:

— Այ քեզ ծեր ու տխմար մարդ, — ասաց տիրացուն, — ինչո՞ւ վաղուց լուր չես տվել ինձ նրա քրիստոնեյական մահվան մասին: Շուտ գնա ժամկոչի մոտ և ասա, վոր զանգերը տա այծի հոգու համար:

Վազեց ծերուկը ժամկոչի մոտ ու ասաց.

— Գնա զանգերը քաշի այծի հոգու համար:

Ժամկոչը բարկացավ և սկսեց ծերուկի մորուսը քաշ տալ: Ծերունին ասաց.

— Բաց թող խնդրեմ, ախր այծը հավատացյալ էր և քեզ թաղման համար հիսուն ուսուցիչ յե կտակել:

— Բա ի՞նչ ես մինչև հիմա մլուխ տալիս: Ավելի շուտ պետք է հայտնեյիր ինձ, վոր առաջուց զանգերը տայի:

Ժամկոչն անմիջապես վազեց զանգակատուն ու սկսեց ուժով զանգերը տալ: Յեկան տերտերը, տիրացուն ու ժամկոչը ծերուկի տունը և սկսեցին թաղման ծեսը. գրին այլ ծին դադաղի մեջ, տարան գերեզմանատուն ու թաղեցին գերեզմանի մեջ:

Միակամներն սկսեցին իրար մեջ խոսել այս գործի մասին և յեպիսկոպոսն իմացավ, թե այսինչ տեղի տերտերը մի այծ է թաղել քրիստոնեյական ծեսով: Յեպիսկոպոսը ծերուկին և տերտերին կանչեց իր մոտ հարցաքննելու:

— Ինչպե՞ս եք համարձակվել դուք այծը թաղել: Ե՛յ, անաստվածներ:

— Ախր այդ այծն ուրիշ այծերի պես չէր յերեք:

նախքան մեռնելը Ձերդ սրբազնության համար հազար
ուրբլի յե կտակել նա, ասաց ծերուկը:

— Այ քեզ հիմար ծերուկ: Յես քեզ չեմ մեղադրում,
թե ինչու յես այժը թաղել, այլ թե ինչու մահվանից առաջ
վերջին ոճումը չես կատարել:

Վերցրեց հազար ուրբլին և արձակեց ծերուկին ու
տերտերին:

ՆՁՊԵՍ ԵՐ ՏԵՐՏԵՐԸ ԲԱՂՑԱԾ ՊԱՆՈՒՄ ՄՇԱԿՆԵՐԻՆ
(Ռուսական ժողովրդական հեկյաթ)

Մի թագավորության մեջ, մի պետության մեջ, հենց
ախտեղ, վարտեղ մենք ենք ապրում, կար մի գյուղացի:
Նա ունեւր յերեք վորդի, յերկուսը խելացի, յերրորդը հի-
մար: Ապրում էին շատ աղքատ: Հայրն էլ ասաց վոր-
դիներին.

— Գոնե մեկդ գնացեք մշակության. տանը բան չկա
անելու:

Հավաքվեցին վորդիները. բայց վոչ մեկն էլ չի ցան-
կանում մշակություն անել: Մտածեցին վիճակ գցել, թե
ով գնա: Վիճակ գցեցին՝ ընկավ մեծ յեղբորը: Մեծ յեղ-
բայրը ձայնը կտրեց ու ճամբա ընկավ:

Մտավ տերտերի մոտ մշակության: Տերտերը նրան
գրեթե վոչինչ չեր տալիս ուտելու և վողջ ձմեռը սովալ-
ուկ պահեց: Մեծ յեղբայրն էլ թողեց հեռացավ:

Մյուս տարին տերտերի մոտ գնաց միջնակ յեղբայրը
և նույնպես քիչ մնաց սովամահ լինեք:

Հերթը հասավ փոքր յեղբորը՝ հիմար Իվանին: Նա
էլ պատրաստվեց ու ճանապարհ ընկավ: Ճամբին տեսավ
նրան տերտերը և առաջը կտրեց:

— Եղ հւր ես գնում, այ բարի մարդ,— հարցրեց
տերտերը:

— Գնում եմ մի աշխատանք ձարեմ,— պատասխանեց:

— Դե արի ինձ մոտ մշակության:

— Կգամ,— ասաց:— Ինչքան կտաս:

— Հարյուր ուրբլի ձմռան համար,— ասաց:

— Լավ, հարյուր ուրբի, բայց ուտելու ել հետը:
— Դե լավ, համաձայն եմ, հիմա նստի սահնակը ու միասին գնանք:

Նստեցին սահնակ ու գնացին տերտերի տուն: Տուն վոր հասան, տերտերը թեյ խմացրեց և ընթրիք տվեց:

— Իսկ հիմա պառկի քնի, վոր առավոտը շուտ խոտ բերելու գնանք:

Առավոտը, մութնուլունին տերտերն արթնացնում է մշակին:

— Վեր կաց, գնալու ժամանակն է:

Ինքը թեյ խմել, կուշտ նախաճաշել է, իսկ մշակին՝ ճամբա ընկնելուց առաջ չի կերակրում: Մշակը շուտ ձիւ լծեց ու ասաց.

— Նստիք, տեր հայր, գնանք:

Նստեցին ու գնացին և արտերն անցան:

— Տեր հայր, — ասում է մշակը, — պարանները մոռացել եմ, խոտն ինչով պիտի կապենք:

— Այ քեզ հիմար: Լավ, վոր շուտ հիշեցիր: Վազի բեր, յես կսպասեմ:

Հիմար Իվանը վազեց յերեցկնոջ մոտ:

— Յերեցկին, տերտերը հրամայեց, վոր մի հատ են լավ ձկներից տաս ու մի շիշ ել գինի:

Յերեցկինն անմիջապես տվեց ու Իվանը վազ տալով գնաց:

— Ես ել պարան, տեր հայր: Հիմա խոտը կապելու բան կա:

Քառասուն վերստ գնացին, սայլը բեռնեցին, կապկապեցին ու ճամբա ընկան դեպի տուն: Մեկ ել մութը վրա տվեց, իսկ մինչև տուն քառասուն վերստ դեռ կա: Հիմար Իվանը դեզի գլխին նստած ձուկը կրծում է ու վրան ել պինին խմում: Մեկ ել տերտերն ասաց հիմար Իվանին.

— Իվան, լավ մտիկ արա, աջ կողմը ճանապարհ կա, չլինի թե ձին այնտեղ ծովի, իսկ յես մի փոքր մրափեմ:

— Լավ, տեր հայր, քնի, յես կհետևեմ այդ ճամբին: Գնում ե Իվանն ու փնտռում այդ ճանապարհը: Հենց վոր տեսնում ե, ցած է թռչում դեզի գլխից ու ձին քաշում դեպի այն ճամբեն, վորով չպետք էր գնային: Այդ ճամբով գնացին նրանք տամսինդ վերստ ու տերտերն արթնացավ, նայեց չորս կողմն ու տեսավ ճիշտ տեղով չեն գնում:

— Իվան, ախար ճիշտ չենք գնում:

— Յես ինչ գիտեսամ՝ ճիշտ ենք գնում, թե անճիշտ:

Չէ վոր դու առջևից ես գնում, իսկ յես քո հետևից:

— Ինչ էս ասում, այ Իվան, ախար յես քեզ պատվիրեցի, թե մտիկ տուր, աջ կողմից ճամբա վոր դա, չգնաս, իսկ դու գնացել ես:

— Այ քեզ բան, ինքը նստել առաջ, ասում է դու յես գնացել:

— Դե վոր եղպես ե, ել ճար չկա, գնանք էս ճամբով: Յերևի մոտերքում գյուղ կա, այնտեղ ել կգիշերենք:

Այդպես ել շարունակեցին առաջ գնալ և հասան մի գյուղ: Տերտերը մշակին ուղարկեց թե՛

— Գնա ու մի գիշերելու տեղ խնդրի վորեւ գյուղացու մոտ:

Մշակը վազեց դեպի գոները: Տեսավ գոները փակ են: Մեկ ել դուրս յեկավ մեծ աղջիկն ու դուռը բաց արեց: Մշակը ներս մտավ ու հարցրեց տանտիրոջ.

— Խնդրում եմ ինձ ու տերտերին տեղ տուր քնենք:

— Գլխիս վրա, — ասաց, — գիշերեցեք:

— Հա, շատ եմ խնդրում, վոր տերտերին ուտելու բան չտաք, թե տաք, ել ավելի կգժվի: Մի կես բերան ասեք, բայց չլինի թե նստեցնեք, վոր նստեցնեք՝ յեթե գժվի, ել չեք կարողանա բավարարել նրան:

— Լավ:

Մշակը ձիերն արձակեց ու տարավ սայլի խոտի մոտ, իրենք ել մտան տուն և հանվեցին:

— Չեք ուզում ընթրել, տեր հայր:

Տերտերը վոչինչ չպատասխանեց, իսկ մշակը շուռ յեկավ ու սեղան նստեց, կերավ, ինչպես հարկն է, իսկ տերտերը քաշվում է ուտելուց. ախար մի խոսք ասացին ու հնստեցրին, իսկ ուտել շատ է ուզում: Այդպիսով մշակն ընթրեց ու շուռ յեկավ թախտի վրա, տերտերն էլ նրա յետևից: Մշակն սկսեց խոստիլ, իսկ տերտերի քունը չէ տանում ու բոթում է մշակին:

— Այ մշակ, ախար քաղցած եմ:

— Հրավիրեցին քեզ ուտել՝ չգնացիր: Հո տանդ չես, վոր յերեցկինը ձեռքդ բռնի նստեցնի: Գնա են մեծ աղջկա մոտ մի կճուճ շիլա կա, կեր, յես տեսել եմ:

Տերտերը թախտից իջավ ու կճուճը գտավ խաչերկաթից կախված:

— Այ մշակ, — ասաց, — շիլան վոնց ուտեմ, գդալ չեմ գտնում:

— Մազոտ սատանա, ինչ ես տիզի պես կպել: Ուտելիք տվի, էլի հանգիստ չես տալիս: Թեք վեր քաշի ու կեր:

Տերտերը ձեռքը խրեց ամանի մեջ ու այրեց, — իսկ այնտեղ վոչ թե շիլա յեր, այլ յեռացած կուպր:

Այ Իվան, ձեռքս չեմ կարող դուրս հանել:

Իվանը պատասխանում է.

— Ես ինչ մազոտ սատանա կպավ ինձ, վոչ զբիշերը հանգիստ չես տալիս քո շիլայով:

Լուսընկա գիշեր եր:

— Այ, շեմքի մոտ հեսանաքար կա, կճուճը շրխկացրու նրան ու ձեռքդ դուրս հան:

Տերտերը վազեց ու խփեց այդ հեսանաքարին. իսկ դա վոչ թե հեսանաքար եր, այլ ճաղատ տանտերն եր քնել, այնպես վոր տերտերը նրա կունդ գլխին եր խփել: Տանտերը գոռաց, տերտերը մի կողմ ցատկեց ու սարսափահար փախավ դուրս: Այդ միջոցին բոլոր տնեցիքն էլ վեր թռան լույսը վառելու:

Տան տերը մի բան է բղավում, մշակն էլ իր կողմից է գոռում:

— Ի՞նչ յեղավ տերտերը:

Դե պատկերացրեք թե ինչ եր տեղի ունենում այդտեղ: Տնվորները թափվեցին մշակի վրա.

— Ի՞նչու սպանեցիք ծերուկին:

Իսկ մշակն էլ տանեցիներին է ասում.

— Ի՞նչ արիք տերտերը: Տվեք նրան այստեղ: Յեթե վոչ, ճենց հիմա կգնամ տասնապետի մոտ, թե վողջ գլուղը հավաքի: Վորտեղից ուզում եք, տվեք տերտերը:

Տանեցիները միտքը փոխեցին:

— Ի՞նչ յեղավ տերտերը:

— Յերեք հարյուր ուրբլի տվեք, — ասում է մշակը, — սուս կենամ, թե չե կգնամ տասնապետի մոտ:

Տնվորները վարանեցին, կովեցին իրար հետ և վերջը յերեք հարյուր ուրբլին տվին:

— Միայն թե յեղածի մասին ձայն չհանես:

Մշակը ձիերը լծեց ու խոտը տարավ տուն:

Տերտերը չի յերևում: Անցավ մի գյուղ ու տեսավ տերտերին մի ամբարի մոտ կանգնած: Կանգնել է ու անտերտերին մի ամբարի մոտ կանգնած: Կանգնել է ու անկյունից նայում և մեկ էլ տեսնում, վոր իր մշակը գալիս է խոտի սայլով:

— Եդ դ՞ու՛ յես, Իվան, — հարցնում է:

— Յես եմ, — մազոտ սրիկա: Պատրաստվիր բանս նստելու: Տանտիրոջն սպանեցիր:

— Մի՞թե եսպես եմ խփել, վոր մեռել է, Իվան:

— Այո, մեռել է: Հիմա էլ պատրաստվում են ուրյադ-նիկի մոտ գնալ և արձանագրություն կազմել:

— Չե՞ս կարող, Իվան, մի կերպ այս գործը կոծկել: Յերեք հարյուր ուրբլի տուր՝ կոծկեմ, չես տա՞ բանս կնստես:

Այդ ժամանակ տերտերը համաձայնեց յերեք հարյուր ուրբլի վճարել մշակին՝ միայն թե գործը կոծկեր: Մշակը

վերադարձավ դյուղ, մի քիչ կանգնեց այնտեղ՝ մի անկյու-
նում ու յետ գնաց:

— Դե, գնա, տեր հայր, ել վոչինչ չի լինի: Գնանք
տուն:

Հասան տուն: Տերտերը խիստ բարի դարձավ ու սկսեց
մշակներին խղճալ: Հենց վոր նստում եր թեյելու՝ մշակին
եղ եր նստեցնում: Իվանը ձմեռն անցկացրեց և հարյուր
ուրբուր փոխարեն յոթ հարյուր վաստակեց, ապա վերա-
դարձավ հոր մոտ ու ասաց.

— Ես ել քեզ փող, հայրիկ: Մի տես ինչքան եմ շա-
հել: Վոչ այնպես, ինչպես մյուս գույգ խելացի վորդիներդ:
Դրանից հետո սկսեցին լավ ապրել ու վայելել:

ՂԱԶՍԻԱԿԱՆ ՇԵՔԻԱԹ

Մի անգամ մի շատ ծեր դագախ, մի պարկ վոսկոր
մեջքին զցած յեկավ քաղաք: Սկսեց անցորդներին հարց-
նել՝ թե ուր ե գտնվում Ուտիլի վարչության պահեստը:
Վերջապես գտավ պահեստը և վոսկորներն ամեց կշեռքի
վրա: Կշռողը նայեց այդ վոսկորներին ու ասաց.

— Հավաքի, ծերուկ, քս ապրանքը: Այս վոսկորներն
ըստ յերևույթին հարյուր տարուց ավելի հին են, փտել
են և մեզ համար պիտանի չեն:

Վշտացավ ծերուկը, բայց ինչ կարող եր անել, սկսեց
վոսկորներն ամել պարկն ու ասաց.

— Մի ուրբի տուր ինձ, թանկագին պետ, և յես
կպատմեմ քեզ, թե ում վոսկորներն են սրանք: Մի ուրբ-
լի տուր, չես զղջա, իմ պատմությունից գոհ կլինես:

Կշռողը խղճաց ծերուկին, վոր իզուր տեղը այդ վոս-
կորները շալակել, բերել եր, ուստի մի արծաթ ուրբի
տվեց նրան՝ թեև հույս չունեի, թե հետաքրքրական բան
կլսեր: Իսկ ծերուկը պատմեց.

— Շատ վաղուց Չու գետն անցնելու տեղերից մեկի
մոտ գտնվում եր մի սրբի գերեզման, վորին բազմաթիվ
հավատացյալներ ուխտ եյին գալիս: Մի ծեր գերվիշ ել
այդ սուրբի անունով բուժում եր, գուշակում ու մարդկանց
ճակատագիրն եր ասում: Դերվիշին ու նրա աշակերտին,
այսինքն ինձ, լավ վողորմություն եյին տալիս և մենք լավ
եյինք ապրում: Այսպես մի քանի տարի նրա մոտ ապրե-
լուց հետո վորոշեցի մի ճամբորդություն կատարել գեպի
սրբազան Մեքքա¹⁾: Ուստի ասացի իմ ուսուցչին.

¹⁾ Քաղաք ե Արաբիայում և այդտեղ ե գտնվում Մուհամմեդի գերեզմանը:

— Ո՛վ ուսուցիչ, որհնիր ինձ, ուզում եմ գնալ սուրբ վայրերը:

Դերվիշն ոգնեց ինձ և վորպեսզի չհոգնեմ վոտքով քայլելուց, նվիրեց ինձ իր միակ եշը: Այդպես յես ճամբա ընկա:

Յոթ որ գնալուց հետո, ուղիդ կեսորին, եշը սայթաքեց, ընկավ ու սատկեց: Արդեն ծերացել եր նա և չէր կարող դիմանալ այդ հոգնեցուցիչ ճամբորդութեան: Նստեցի յես նրա կողքին ու սկսեցի լաց լինել, վորովհետև այդ յերկարատև ճամբորդութեան զրկանքներն ու չարչարանքներն ինձ սարսափեցնում էին: Հանկարծ նկատեցի, վոր ճամբով մի խումբ ձիավորներ են գալիս: Վախենալով, վոր կարող են մեղադրել ինձ, թե անխիղճ կերպով չարչարելով իշին մեռցրել եմ՝ արագ քաշեցի նրան ճամբից ու մի կուլտ քար դիգեցի վրան:

Յերբ ձիավորները հավասարվեցին իշու գերեզմանին և տեսան իմ գերվիշական հագուստը՝ հարցրին թե ինչու եմ լալի:

— Իմ լավագույն ընկերոջ հետ գնում եյի մարգարեյի քաղաքը, — պատասխանեցի նրանց: — Ընկերս հենց այստեղ ել մահացավ, դրա համար ել այսպես դառն լաց եմ լինում նրա գերեզմանի վրա:

— Յերևում ե, վոր բարեկրոն մարդ եր ընկերդ, քանի վոր այդպես դառն վողբում ես, — և միքանի վոսկեղրամ գցելով ինձ՝ ձիավորները հեռացան:

Դեռ լավ չէյի հաճատացել ու մտքերս հավաքել, յերբ տեսա, վոր մի մեծ ամբոխ ե գալիս: Դրանք հարևան քաղաքի բնակիչներն էին: Դու մի ասի, վոր այդ ձիավորները պատմել էին, թե վոչ հեռու մի սուրբ ե մեռել ու թաղվել: Դրա համար ել այդ քաղաքի բնակիչները յեկել էին խնդրելու ինձ, վոր մնամ այդտեղ ու ապրեմ ընկերոջս գերեզմանի կողքին, վորի համար նրանք առաջորեն

կվարձատրեն ինձ: Մի ասի, վոր այդ քաղաքում մինչ այդ վոչ մի սրբի գերեզման չկար:

Յես միքիչ մտածեցի ու վորոշեցի, վոր սուրբ իշու աճյունն ինձ կարող ե պիտանի լինել ու հիմարությունս կլիներ հրաժարվել այն յերջանկությունից, վոր ինքն իրեն գալիս եր ձեռքս: Յեվ համաձայնեցի:

Իմ սրբի փառքն արագութեամբ աճեց: Ուխտավորների թիվն որ-որի վրա ավելանում եր: Մի քանի տարի անց, մեկ ել հանկարծ ներս մտավ նախկին ուսուցիչը:

— Քո սրբի փառքը հասավ մինչև ինձ և յես վորոշեցի յերկրպագել նրա աճյունին ու խնդրել, վոր իմ մեղքերի համար բարեխոսի աստծո առջև: Բայց մի պատմի, թե ո՞վ ե քո սուրբը և ինչպես դու ընկել ես այստեղ:

Յես ել ուսուցչիս պատմեցի ճիշտ յեղելությունը՝ կարծում էյի, թե նա խիստ կբարկանա, բայց դերվիշն սկսեց բարձրաձայն ծիծաղել ու խփել ուսիս: Այդ միջոցին յես վորոշեցի մի հարց տալ նրան, մի բան, վոր առաջ չէյի համարձակվի: Յեվ հարցրի.

— Ասա, ո՞վ ուսուցիչ, իսկ ո՞վ ե այն սուրբը, վորի գերեզմանի վրա ապրում ես դու:

— Քո սուրբի մայրն եր, — պատասխանեց ուսուցիչս ծիծաղելով:

Պատմել ե «Փախթա Արալ» խորհրդային տնտեսութեան ձիապան Բայմուրատ Նուրագուլը:



ԻՆՉՊԵՍ ՏԵՐՏԵՐՆԵՐԸ ԼՈՂԱՅԱՆ

Մի անգամ ամառը, տերտերը, տիրացուն ու ժամհարը գնացին գետը լողանալու: Լողացան, լողացան, մեկ ել տերտերն ասաց.

— Յեկեք բոլորս միասին սկենք: Ով ամենից առաջ վեր բարձրանա, գնանք նրա տունը ճաշելու ու յերեքական թաս գինի խմենք:

Բոլորն ել համաձայնեցին: Սկսեցին սկել ու մնացին ջրի տակ, ամեն մեկը վախենում է թե առաջինը դուրս չգա: Ամենից առաջ ջրի տակից դուրս յեկավ տիրացուն, տեսավ վոր վոչ վոք չկա, նորից սկեց: Հետո ժամհարը գլուխը դուրս ցցեց, տեսավ վոչ վոք չկա, նորից մտավ ջուրը:

Նրանցից հետո դուրս յեկավ տերտերը: Նա յերկար ժամանակ նստել էր ջրի տակն ու մտածում էր, թե հիմա կգնամ տիրացուի կամ ժամհարի մոտ, կճաշեմ ու գինի կխմեմ: Նայում է, վոչ վոք չկա: Վախեցավ տերտերն ու նորից սկեց:

Հետո դուրս յեկավ ժամհարն ու նորից մտավ ջուրը: Նրանից հետո տիրացուն և նորից մտավ ջուրը: Հետո ել տերտերը:

Նրանք յերկար այդպես սկեցին, բայց վերջապես սկսեցին խեղդվել:

Ափից մի գյուղացի յեր անցնում: Նա տեսավ, վոր մարդիկ են խեղդվում, շորերը հանեց ու նետվեց գետը: Մագերից բռնած դուրս հանեց ջրահեղձներին, մեկ ել տե-

սավ, վոր տերտերն ու նրա մարդիկն են: Խեղճը շատ վախեցավ ու աղաչեց նրանց:

— Վոչ վոքի չասեք, թե յես ձեզ դուրս հանեցի:

— Ինչո՞ւ, զարմացավ տերտերը:

— Վորովհետև դրա համար գյուղացիներն ինձ կըսպանեն:

Հեքիաթը գրի յե առել 1935 թ. Արևմտյան մարզի Կողբլի շրջանի Վիրի գյուղխորհրդի Բուդիրի գյուղում Կ. Սիդորովը՝ կուլտանեսական Ա. Սիդորովից:

Տեխ. իմբռադիր՝ Ան. Դասադրյան
Սրբազրիչ՝ Խ. Այվազյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԶԱՓԱԾՈ

Ա. Ս. Պուշկին	Տերտերն ու իր Բալդի ծառան	7
Հայնրիխ Հայնե	Շլեզվիգի ջուրհակները	16
Ալ. Ծատուրյան	Հայ քահանա	18
»	Դայլ բարեպաշտ	19
Վ. Մայակովսկի	Կեղծապաշտը	20
»	Յերկու աֆիոն	24
»	Արդյունքները	29
»	Տերտերը	32
Դեմյան Բեդնի	«Հարյալ վորդին ասածո»	35

ԱՐՁԱԿ

Անրի Բարբյուս	Ուսուցիչը	41
Նար-Դոս	Սաքուլն ուխտ գնաց	47
Յարոսլավ Հաշեկ	Առաջին քրիստոնյաների հետապնդումը Պրագայում	70
»	Գովք աստծուն	73
Ն. Ոստրովսկի	Ինչպես եր կոփվում պողպատը (հատված)	77 83
Մ. Զոչենկո	Սատանան	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔՅԱԹՆԵՐ

Ազահ տերտերը	91
Բարի տերտերը	94
Այծի թաղումը	96
Ինչպես եր տերտերը քաղցած պահում մշակներին	101
Ղազախական հեքիաթ	107
Ինչպես տերտերները լողացան	110

Գլավիտի լիազոր Դ.—3567
Հրատ. 4511, պատվեր 198, ախրած 4000
Հանձնված է արտադրության 1938 թ. մարտի 4-ին
Ստորագրված է տպագրության 1938 թ. ապրիլի 29-ին
Թուղթը 62x74, 7 տպ. մամ., հեղին.՝ 4 մամ., տպ. նիշ 24,480

Գինը 1ա. 50 կոպ.
Պետհրատի 2-րդ տպարան, Յերևան, Նալբանդյան, 5

«Ազգային գրադարան»



NL0165868

306

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

АНТИРЕЛИГИОЗНИИ
СБОРНИК

Арменгиз 1938 год